



ISSN 1829-4219

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

№ 90 2015



- ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ
- ԱՊՀ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ
- ՄԻԵԴ-ՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ
- «ՓԵՐԻՆՉԵՔՆ ԸՆԴԴԵՄ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ» ԳՈՐԾՈՎ ՄԻԵԴ ՄԵԾ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ
- STRUCTURALISM, NATIONAL SECURITY AND AMERICA'S DOUBLE GOVERNMENT



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 90 2015

ՀՀ ԳՐԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

Էմիլ Բաբայան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս, (խորհրդի նախագահ)

Թամարա Շաքարյան ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ, իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի դասախոս, (գլխավոր խմբագիր)

Դավիթ Մելքոնյան ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Մհեր Հակոբյան ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Գլխավոր խմբագիր՝ Թ. ՇԱԲԱՐՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511 530, ֆաքս՝ 585 152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝ 09.11.2015թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ», 2015 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ	
ՀՀ նախագահի հրամանագրերը	3
Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի նիստ	4
ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ	
ՀՀ գլխավոր դատախազի հրամաններ	5
«ՓԵՐԻՆՉԵՔԸ ԸՆԴԴԵՄ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ» ԳՈՐԾՈՎ ՄԻԵԴ ՄԵԾ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՌԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ	
ՀՀ կառավարության պահանջները Փերինչեքի գործով ամբողջությամբ բավարարվել են ՄԻԵԴ-ի կողմից	7
Statement by G.Robertson QC and A.Clooney on the ECHR in the case of Perincek v Switzerland	8
ՄԻԵԴ-ՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՑՈՒՅՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՁԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ	
Կայացել է ծրագրի և կայքէջի շնորհանդեսը	9
ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանի ողջույնի խոսքը ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի կայքէջի շնորհանդեսի առթիվ	11
ԱՊՉ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՅՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ	
Կայացել է ԱՊՉ անդամ պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի նիստը	13
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ	
ԵՏՄ անդամ պետությունների գլխավոր դատախազների հանդիպումն Աստանայում	16
Հանդիպումներ Հնդկաստանի և Ուզբեկստանի գլխավոր դատախազների հետ	17
Հանդիպում ԱՊՉ անդամ պետությունների ԳԴԽ քարտուղարի հետ	17
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	
Թբիլիսիում հանդիպել են Գ.Կոստանյանը և Գ.Բաղաշվիլին	18
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ	
Հանդիպումներ ՀՀ գլխավոր դատախազությունում	19
ԴԱՏԱԽԱՅՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ 7-ՐԴ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ	
ՀՀ գլխավոր դատախազը ԴՄԱ-ի 7-րդ տարածաշրջանային կոնֆերանսին	21
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՅՆ Գ.ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ	
Национальный опыт Республики Армения по борьбе с терроризмом и насильственным экстремизмом	23
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՍՈՉԻՈՒՄ	
Հանդիպում դատախազների միջազգային առցանց համաժամանակյա պատվիրակության հետ	27
ՀՀ գլխավոր դատախազը Սոչիում երկկողմ հանդիպումներ է ունեցել	28
Հանդիպում մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության պատվիրակության հետ ..	29
Գ.Կոստանյանն ու Յու. Չայկան ստորագրել են համագործակցության ծրագիր	29
INTERNATIONAL LAW	
Michael J. Glennon Structuralism, national security and America's double government	31
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Արթուր Նազարեթյան Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը.....	47
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	
Նելլի Աղաբաբյան Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական գործը կարճելը և քրեական հետապնդումը դադարեցնելը	52
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Հարություն Գևորգյան Սեփականատիրոջ ընտանիքի անդամների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի առաջացումը	59
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	
Վարդան Սախկալյան Իրավունքի էական հատկանիշները	66
ՍԵՂՄԱԳՐԵՐ	
Սեղմագրեր / Абстракты / Abstracts	72
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ	
ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	76

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ Ա.Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ո ռ ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, իրավակարգի և օրինականության ամրապնդման գործում ներդրած ավանդի համար Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Արտավազ Հենրիկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ պարգևատրել Մխիթար Գոշի մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2015թ. Սեպտեմբերի 16
Երևան
ՆՀ-665-Ա



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ Վ.Ժ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ո ռ ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, իրավակարգի և օրինականության ամրապնդման գործում մատուցած ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետ Վահագն Ժուլվերի ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ պարգևատրել Մխիթար Գոշի մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2015թ. Սեպտեմբերի 16
Երևան
ՆՀ-666-Ա

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԻՍ



2015 թվականի սեպտեմբերի 19-ին տեղի է ունեցել ՀՀ դատախազության կոլեգիայի նիստ, որը վարել է ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը: Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկումից հետո դատախազության համակարգի մի շարք աշխատակիցների Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առթիվ շնորհվել են արտահերթ դասային աստիճաններ, մի շարք դատախազներ պարգևատրվել են մեդալներով, հուշանվերներով և շնորհակալագրերով, մասնավորապես՝ ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու, իրավակարգի ամրապնդման համար և անկախության տոնի առթիվ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ, երկրորդ դասի խորհրդական **Ա. Մանուկյանը**, էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական **Ռ. Խաչատրյանը**, Արմավիրի մարզի դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական **Մ. Շահգալղյանը**, Սյունիքի մարզի

դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Գ. Դանիելյանը**, Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Է.Հարությունյանը**, Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական **Ա. Ամիրյանը** պարգևատրվել են «**Իրավակարգի ամրապնդման համար**» մեդալով:

Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու և անկախության տոնի առթիվ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Վայոց Ձորի մարզի դատախազի տեղակալ, առաջին դասի խորհրդական **Գ. Խաչիկյանը** պարգևատրվել է **հուշանվեր-ժամացույցով**:

Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու և անկախության տոնի առթիվ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Հ. Պետրոսյանը** և Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարա-

րադատության երրորդ դասի խորհրդական **Հ. Նիկողոսյանը** պարգևատրվել են «**ՀՀ դատախազություն**» կրծքանշանով:

Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու և անկախության տոնի առթիվ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ անվտանգության մարմիններում քննվող թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիրբերհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական **Ա. Փանոսյանին** արտահերթ կարգով շնորհվել է **արդարադատության երկրորդ դասի խորհրդականի** դասային աստիճան:

Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու և անկախության տոնի առթիվ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով մի խումբ դատախազների և ա-

վագ դատախազների հայտարարվել է շնորհակալություն, մի խումբ դատախազներ և ավագ դատախազներ խրախուսվել են դրամական պարգևով:

Անկախության տոնի առթիվ և ծննդյան 90 ամյակի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Հայկական ԽՍՀ դատախազության դատարաններում քաղաքացիական գործերի քննության վրա հսկող բաժնի նախկին դատախազ **Ռոզա Մելիքջանյանին** հայտարարվել է շնորհակալություն:

Շնորհավորելով ներկաներին Հայաստանի Հանրապետության անկախության 24-րդ տարեդարձի առթիվ՝ ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը կարևորել է յուրաքանչյուր քաղաքացու և հատկապես պետական պաշտոնյայի դերն անկախության պահպանման և պետության զարգացման գործում:



ՀՀ ՂԵՆԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ քննչական կոմիտեի նախագահ, ՀՀ նախկին գլխավոր դատախազ **Ա. Հովսեփյանը** պարգևատրվել է **հուշանվերով**:

ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցության համար և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության պետի տեղակալ **Ս. Ավետիսյանը** և ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ **Դ. Մարտիրոսյանը** պարգևատրվել են «**Համագործակցության ամրապնդման համար**» մեդալով:

ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցության համար և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ **Հ. Գրիգորյանը** պարգևատրվել է **հուշանվերով՝ ժամացույցով**:

ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցության համար և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ ՔԿ ՋՔԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ **Ա. Ասատրյանը** և Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ **Հ. Մարտիրոսյանը** պարգևատրվել են **հուշանվերներով**:

Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ քննչական կոմիտեի մի խումբ աշխատակիցների հայտարարվել է շնորհակալություն:

Իրավակարգի ամրապնդման գործում ներդրած ավանդի, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատողի օրվա կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար **Ա. Երիցյանը** պարգևատրվել է **հուշանվերով**:

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատողի օրվա կապակցությամբ և ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցության համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ տնօրեն **Ա. Կարապետյանը** և ՀՀ տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի պետ **Հ. Խանգելյանը** պարգևատրվել են «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատողի օրվա կապակցությամբ և ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցության համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության օպերատիվ կառավարման վարչության պետի տեղակալ **Մ. Ուլիկյանը** և ՀՀ տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության ճառագայթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի մոնիտորինգի բաժնի պետ **Վ. Բազիյանը** պարգևատրվել են **հուշանվերներով**:

ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցություն ապահովելու համար և ՀՀ զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի կազմավորման առթիվ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր **Օ. Գասպարյանը** պարգևատրվել է «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՓԵՐԻՆՉԵՔԻ ԳՈՐԾՈՎ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ ԵՆ ՄԻԵԴ-Ի ԿՈՂՄԻՑ



2015 թվականի հոկտեմբերի 15-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հրապարակեց *Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի* գործով վճիռը: Այդ գործում Հայաստանի Հանրապետությունը ներգրավված էր որպես երրորդ կողմ:

Գործին մասնակցելով երրորդ կողմի կարգավիճակում Հայաստանի Հանրապետությունն ակնկալում էր, որպեսզի ՄԻԵԴ-ի վճիռից բացառվեն ձևակերպումներ, որոնք կարող են որևէ կերպ կասկածի տակ առնել Հայոց ցեղասպանության փաստը:

Վճռում դատարանը նշեց, որ այս գործով դատարանի խնդիրը չէ որոշելու՝ արդյո՞ք Օսմանյան կայսրությունում 1915 թվականի հայ ժողովրդի նկատմամբ կատարված զանգվածային կոտորածներն ու տեղահանումները կարող են որակվել ցեղասպանություն՝ միջազգային իրավունքում այդ հասկացությանը տրված բովանդակության տեսանկյունից: Այնուհետև, դատարանի Մեծ պալատը սահմանեց, որ ՄԻԵԴ-ը չունի որևէ իրավասություն՝ անելու իրավական հայտարարություններ այս հարցի վերաբերյալ՝ անկախ նրանից, թե որ տեսանկյունից է դա արվում:

Դատարանը վճռում նաև արձանագրեց,

որ հայերն ունեն իրենց և իրենց նախնիների արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունք, այդ թվում՝ այն շրջանակներում, որն առնչվում է ցեղասպանության հետևանքով վնաս կրած հայկական համայնքի ինքնությանը: Դատարանը նաև դրանով արձանագրեց, որ հայերի այդ համոզմունքները և դրա հետ կապված նրանց արժանապատվությունը ենթակա են պաշտպանության կոնվենցիոն չափանիշների շրջանակներում:

Եվ վերջապես, Փերինչեքի հետ կապված կոնկրետ գործով դատարանը սահմանեց, որ նրան քրեական պատասխանատվության ենթարկելը ոչ թե ընդհանրապես հակասում է ՄԻԵԴ նախադեպային իրավունքին, այլ արձանագրեց, որ Փերինչեքի նկատմամբ սխալ է կիրառվել շվեյցարական օրենքը: Այսինքն՝ Հայոց ցեղասպանությունը ժխտելը քրեականացնելը և դրա համար քրեական պատասխանատվության ենթարկելը համարվել է իրավաչափ, որը, սակայն, պետք է արվի բացառապես Եվրոպական կոնվենցիայի շրջանակներում:

Արդյունքում, Հայաստանի կառավարության կողմից ՄԻԵԴ-ին ներկայացված բոլոր պահանջները բավարարվեցին:

¹ Վճռի ամբողջական տեքստին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով, տե՛ս [http://hudoc.echr.coe.int/eng#{"docname":\["Perinçekv.Switzerland"\],"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\],"itemid":\["001-158235"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{):

STATEMENT BY GEOFFREY ROBERTSON QC AND AMAL CLOONEY ON THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS DECISION IN THE CASE OF PERINCEK V SWITZERLAND

We are pleased that the European Court of Human Rights today endorsed our argument on behalf of the Government of Armenia, which intervened in the case between Dogu Perincek and Switzerland. The decision is a victory for Armenia.



Today the European Court ruled that the applicant's freedom of speech should not have been restrained because it was not likely to incite violence or racial hatred. Thus Perincek should not have been prosecuted by the Swiss authority because his rant, in the Turkish language, would have had no impact at all on social harmony and race relations in Switzerland.

Armenia intervened in the case for one reason: the lower court had cast doubt on the fact that a genocide against the Armenian people occurred in 1915. As counsel we sought to correct this grave error, and the Grand Chamber has done so. Today's judgment did not dispute the fact of the Armenian genocide: ten judges said the question should not have been addressed at all whilst seven stated that "the Armenian genocide is a clearly established historic fact".

The judgment also upholds the Armenians'

right under European law to have their dignity respected and protected, including by recognition of a communal identity forged through suffering from the annihilation of over half their race by the Ottoman Turks (see para 227).

The court's decision upholding the importance of freedom of expression has important consequences for Turkey, which has the worst record of any state before the European Court on free speech. Turkey can no longer justify prosecuting those like Hrant Dink who are accused of "insulting Turkishness" contrary to article 301 of the Penal Code by writing about the reality of the Armenian genocide. These prosecutions are plainly contrary to the free speech guarantee under article 10 of the European Convention on Human Rights as interpreted in the Perincek case. We call on Turkey to abolish article 301 and cease malicious prosecutions pursued on its terms.

Perincek is a provocateur who should not have been made the martyr that he was so keen to become. We note that the Court rejected his demand for 120,000 euro compensation, and awarded him nothing – not even his own legal fees.

Note to editors: This case has already been misrepresented in the British press. For example The Telegraph characterizes the judgment in its headline as being "... a blow to Amal Clooney...". Ms Clooney and Mr Robertson appeared for Armenia as a third party, which was concerned to ensure that the Armenian genocide was not put in doubt by Europe's human rights court. They took no position on Perincek's guilt or innocence. The only 'blow' was to the defendant state - i.e. Switzerland, the prosecuting state which they did not represent, and to Turkey which cannot now quote the European Court when it seeks to cast doubt on the Armenian genocide.

ԿԱՅԱՑԵԼ Է ԾՐԱԳՐԻ ԵՎ ԿԱՅՔԷՁԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



2015 թվականի սեպտեմբերի 30-ին Եվրոպայի խորհրդի ծրագրի աջակցությամբ տեղի ունեցավ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության պաշտոնական կայքի շնորհանդեսը:

Կայքի ստեղծման հիմնական նպատակն է առավել արդյունավետ դարձնել Եվրոպական դատարանի վճիռների կատարումը՝ Բոլուսելի հռչակագրի հիման վրա Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի որդեգրած նոր սկզբունքներին համահունչ:

Նման նոր մոտեցումների ընդունումը պայմանավորված է նրանով, որ Եվրոպայի խորհրդի առջև ծառայած է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման մարտահրավերը: Այս հիմնարար խնդրի հաջող իրագործումը կախված է մի շարք հիմնարար պահանջների իրացումից: Մասնավորապես, կարևորվում է Եվրոպական դատարանում պետությունների կառավարությունների ներկայացուցիչների կողմից Եվրոպական դատարանի վճիռների կատարման շրջանակներում խորհրդարանի, դատարանների, պետական մյուս մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ նպատակային ու ինստիտուցիոնալ համագործակցության հաստատումը: Այդ առումով ներկայա-

ցուցի կայքն առաջինն է Եվրոպայի խորհրդի տարածքում և կլինի հենց այն կարևոր գործիքներից մեկը, որի շնորհիվ մեր քաղաքացիների համար մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը կդառնան առավել հասանելի, իսկ դրանցով նախատեսված իրավական պաշտպանության մեխանիզմները՝ մատչելի: Սա կբարձրացնի իրազեկվածության մակարդակը՝ նպաստելով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետ գործադրմանը: Այդ կերպ կբարձրանա նաև նպատակային և ինստիտուցիոնալ համագործակցության մակարդակը վճիռների կատարման հարցում:

Կայքէջի շնորհանդեսին նվիրված միջոցառման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Գևորգ Կոստանյանի հրամանով տեղի ունեցան պարզաատրումներ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի զարգացման հարցում ներդրած ավանդի և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի զարգացման հարցում ներդրած ավանդի և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ

արդարադատության նախարարի տեղակալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի տեղակալ **Արման Թաթոյանը** պարգևատրվել է **հուշանվերով**:



Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի զարգացման հարցում ներդրած ավանդի և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետ **Ա. Սեդ-**

րակյանը, նույն վարչության վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժնի պետ **Ա. Շահնազարյանը**, բաժնի փորձագետ **Շ. Հակոբյանը** պարգևատրվել են «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության վարչական և քրեական գործերի բաժնի պետ **Դ. Ղուկեյանը**, նույն վարչության վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժնի կրտսեր մասնագետ **Ա. Գևորգյանը** պարգևատրվել են **հուշանվերով**:

Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ արդարադատության նախարարության երկու աշխատակցի՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի օգնական Սերգեյ Ղազինյանին և «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի փորձագետ Անահիտ Հարությունյանին հայտարարվել է շնորհակալություն, նրանք պարգևատրվել են շնորհակալագրերով:

ՀՀ ՉԵՐԿԱՎՈՐ ՊԱՏԱԽԱՉ Ք.ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԻԵԴ-ՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻ ԿԱՅՔԷՋԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԱՌԹԻՎ

Նախ, շնորհակալություն եմ հայտնում այս միջոցառմանը Ձեր մասնակցության համար: Այն համարում եմ կարևոր, քանի որ այստեղ ներկաներիցս յուրաքանչյուրը մեր կարգավիճակի ուժով կոչված էք նպաստելու մարդու իրավունքների երաշխավորմանը և պաշտպանությանն ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Այսօր մենք ապրում ենք այնպիսի փոխկապակցված աշխարհում, որտեղ իրականում մարդու իրավունքների պաշտպանության համար այլևս սահմաններ գոյություն չունեն:



Հայաստանի Հանրապետությունը սեփական իրավական համակարգը զարգացնում է՝ հիմքում ունենալով մարդու արժանապատվության գերակայության, նրա իրավունքների և ազատությունների իրական պաշտպանության հիմնարար սկզբունքները: Սա ինքնին ենթադրում է համակարգային այնպիսի միջոցառումներ, որոնք ունակ են ապահովելու դրանց լիարժեք իրացումը թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ գործնականում:

Այս հիմնարար խնդրի լուծմանն առաջին հերթին ուղղված է իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիոն համակարգը: Այդ համակարգը կոչված է ոչ միայն երաշխավորելու անձի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, այլ նաև ներդնելու այդ հիմ-

նարար արժեքների դատական պաշտպանության գործունե երաշխիքներ:

Կոնվենցիոն այս համակարգի բաղկացուցիչ մաս արդարացիորեն կազմում է Եվրոպական դատարանում պետության ներկայացուցչի ինստիտուտը և դրանով իսկ լրացնում կոնվենցիայով ստեղծված իրավապաշտպան դատական համակարգը:

Կառավարության լիազոր ներկայացուցիչը դասական իմաստով, իհարկե, հանդիսանում է պետության փաստաբանը եվրոպական դատարանում և, ըստ այդմ, ինչպես ցանկացած փաստաբան, պարտավոր է հնարավորինս պաշտպանել պետության շահերը և հնարավորինս հստակ ներկայացնել պետության դիրքորոշումն այս կամ այն հարցով: Սակայն Եվրոպական դատարանում լիազոր ներկայացուցչի պարտականությունները ավելին են քան զուտ ներկայացուցչությունը: Ըստ էության ներգրավված լինելով պետության շահերի պաշտպանությանը եվրոպական դատարանում՝ լիազոր ներկայացուցիչն ամենախրազել պաշտոնյան է դառնում պետության իրավական համակարգում առկա խնդիրների և միևնույն ժամանակ այդ խնդիրների եվրոպական չափանիշներին համահունչ լուծումների վերաբերյալ: Այս համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ լիազոր ներկայացուցիչը Հայաստանի վերաբերյալ ցանկացած վճռից հետո նախանշում է օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման ուղղությունները, որոնք անհրաժեշտ են եվրոպական դատարանի արձանագրած խախտումները հետագայում բացառելու համար:

Սակայն Եվրոպական դատարանի առջև ծառայած բարդ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Եվրոպայի խորհրդի կողմից որդեգրվեցին վճիռների կատարման նոր սկզբունքներ: Այդ սկզբունքները տեղ են գտել Ինտերլակենի, Բրայթոնի և, հատկապես, Բրյուսելի հռչակագրերում և ուղղված են սուբսիդիարության սկզբունքի ամրապնդ-

մանը, դատարանի գործունեության, ինչպես նաև դատարանի վճիռների կատարման արդյունավետության բարձրացմանը:

Այս հռչակագրերի համատեքստում հատկապես կարևորվում է Եվրոպական դատարանում պետությունների կառավարությունների ներկայացուցիչների դերը դատարանի իրավական դիրքորոշումների իրագործման հարցում: Այդ նոր մոտեցումների համաձայն՝ կառավարությունների և նրանց ներկայացուցիչների գործունեությունը չպետք է սահմանափակվի միայն քաղաքացիների գանգատների կապակցությամբ Եվրոպական դատարան դիրքորոշումներ ներկայացնելով կամ դատարանում պետության շահերը պաշտպանելով: Կառավարության ներկայացուցիչ դերն այսպիսով շատ ավելին է. այն կոչված է նպաստելու համակարգային առումով երկրում եվրոպական իրավական չափանիշների ներդրմանը: Այս հիմնարար մոտեցումը բխում է իմ կողմից արդեն իսկ նշված հռչակագրերի պահանջներից և կոչվում է կանխարգելիչ մոտեցում: Այն ենթադրում է պետության ներսում այնպիսի համալիր միջոցառումների իրականացում, որոնք կնվազեցնեն Եվրոպական դատարան ներկայացվող գանգատների թիվը: Այդ կերպ հնարավոր կլինի բարձրացնել դատարանի կողմից գանգատների քննության արդյունավետությունը:

Այս պայմաններում արդարացիորեն կարևորվում է ոչ միայն պետական մարմինների հետ ակտիվ աշխատանքը, այլ նաև համագործակցությունը քաղաքացիական հասարակության, երկրում մարդու իրավունքների ազգային հաստատությունների հետ: Կարևոր է նաև արդյունավետ համագործակցությունը դատական համակարգի և խորհրդարանի հետ:

Եվ իհարկե, վերը շարադրված նոր մոտեցումների իրացման կարևորագույն սկզբունքներն են համարվում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի հասանելի լինելը, իսկ դրանցով նախատեսված իրավական պաշտպանության մեխանիզմները՝ մատչելի լինելը: Սա կբարձրացնի իրազեկվածության մակարդակը՝ նպաստելով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետ գործադրմանը:

Այս առումով մարդու իրավունքների եվրո-

պական դատարանում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչի և նրա աշխատակազմի կայքը կդառնա այն կարևոր գործիքը, որի շնորհիվ էլ ավելի կամրապնդվի պետություն-հասարակություն և հակառակ կապը: Այստեղ տեղադրված են մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, ինչպես նաև նախատեսված են բացատրական բնույթի մատչելի տեղեկություններ քաղաքացիների՝ Եվրոպական դատարան հասցեագրված գանգատների քննության ընթացակարգերի, այդ հարցում Եվրոպական դատարանում լիազոր ներկայացուցչի դերի, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճռի կատարման կանոնների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների գործընթացի շրջանակներում հատկապես կարևոր է եվրոպական չափանիշներից բխող այնպիսի լուծումներ ներդնելը, որոնք ունակ են ապահովելու նշածս համակարգային խնդրի ամբողջական լուծումը ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլ նաև գործնականում: Այս նպատակներին հասնելու համար մեզ համար հատուկ կարևորություն է ներկայացնում համագործակցությունը ԵԽ Նախարարների կոմիտեի Եվրոպական դատարանի վճիռների կատարման ստորաբաժանման հետ:

Օրինակ՝ Եվրոպական դատարանի պահանջներով էր պայմանավորված ՀՀ-ում այլընտրանքային ծառայության նոր ինստիտուտի ներդրումը: Մասնավորապես, *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2011 թվականի վճռում խախտում էր ճանաչվել այն, որ ՀՀ-ն չի նախատեսում զինվորական ծառայությունից բացառություն այն անձանց համար, ովքեր կրոնական համոզմունքների պատճառով չեն կարող ծառայել զինված ուժերում: Այդ վճռի հիման վրա ՀՀ-ում նախատեսվեց զինվորական ծառայությունից դուրս այլընտրանքային ծառայության հնարավորություն այն նշված կատեգորիայի անձանց համար: Բացի այդ, Հայաստանում ստեղծվել և գործում է համապատասխան միջգերատեսչական հանձնաժողով: Եվրոպական դատարանի այս վճռով սահմանված պահանջների կատարման գնահատման արդյունքում ԵԽ Նախարարների կոմիտեի Եվրոպական դատարանի վճիռների կատարման

վերահսկողության ստորաբաժանման կողմից այդ գործն այս տարի փակվեց:

Այս ամենով հանդերձ ուշագրավ են տվյալները Եվրոպական դատարանի դատական իրավագործությունն ընդունելուց ի վեր Հայաստանի դեմ ներկայացված գանգատների և դրանց կապակցությամբ կայացված վճիռների վերաբերյալ: Մասնավորապես, Եվրոպական դատարանի կողմից վարվող հաշվառման տվյալների համաձայն՝ 2002 թվականից 2014 թվականի սեպտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետության դեմ Եվրոպական դատարան է ներկայացվել ավելի քան 2000 գանգատ:

2015 թվականի սեպտեմբերի 28-ի դրությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրել է 57 վճիռ:

Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ Եվրոպական դատարանի ընդունած

վճիռներով դիմումատուների կողմից 2015 թվականի սեպտեմբերի 28-ի դրությամբ ներկայացվել է ընդհանուր շուրջ 15 միլիոն եվրոյին համարժեք փոխհատուցման պահանջ, որից բավարարվել է շուրջ 806 հազար եվրոն, այսինքն՝ ընդհանուր պահանջի շուրջ 5.4%-ը: Բավարարված գումարից 306 000 եվրոն, այսինքն՝ բավարարված ընդհանուր գումարի շուրջ 38%-ը, վճարվել է ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ամփոփելով խոսքս՝ ուզում եմ ընդգծել, որ բոլորիս համատեղ ջանքերով է միայն հնարավոր մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բարդ խնդրի իրացումը և Եվրոպական դատարանի իրավական չափանիշների ներդրումը: Շնորհակալություն եմ հայտնում արդյունավետ համագործակցության և այս կայքի շնորհանդեսի միջոցառմանը Ձեր ակտիվ մասնակցության համար:

ԿԱՅԱՑԵԼ Է ԱՊՀ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՆԱԶՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքում կայացել է ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի¹ 25-րդ հոբեյանական նիստը՝ նվիրված կառույցի ստեղծման 20-ամյակին:

Ֆորումի աշխատանքներին մասնակցել են ԱՊՀ գլխավոր դատախազությունների պատվիրակությունները՝ Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ասխատ Դաուբաևի, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի, Բելա-

ռուսի Հանրապետության գլխավոր դատախազ Ալեքսանդր Կոնյուկի, Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ինդիրա Զուդուբանայի, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Յուրի Չայկայի, Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազ Յուսուֆ Ռախմոնի, Ադրբեջանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Ռուստամ Ուսուբովի, Մոլդովայի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Յուրի Գառաբայի, ինչպես նաև ԱՊՀ գործադիր կոմի-

¹ ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհուրդը, որը ստեղծվել է 1995 թվականի դեկտեմբերին, հանդիսանում է Համագործակցության միջազգային մարմին, կազմակերպում է գլխավոր դատախազությունների, ԱՊՀ անդամ պետությունների դատախազությունների համագործակցությունն ու փոխգործակցությունն օրինականության ապահովման, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության, հանցավորության դեմ պայքարի շրջանակում: 2000 թվականի հունվարի 25-ին Համագործակցության անդամ պետությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ նրան տրվել է ԱՊՀ միջազգային մարմնի կարգավիճակ: Այս փաստաթուղթը ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուկրաինայի կողմից:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015



տեի նախագահ Սերգեյ Լեբեդևի և ԱՊՀ անդամ պետությունների ԳԴՀԽ քարտուղար Լեոնիդ Երմոլակի գլխավորությամբ:

ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի նախագահ, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Յուրի Չայկան իր ողջույնի խոսքում ընդգծել է քննարկվող հարցերի կարևորությունն ու արդիականությունը տարածաշրջանում նոր մարտահրավերների ու սպառնալիքների առաջացման համատեքստում:

«Հ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանն իր խոսքում նշել է, որ ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կորդինացիոն խորհուրդն այս 20 տարիների ընթացքում ապացուցել է, որ հանդիսանում է անփոխարինելի և արդյունավետ հարթակ հանցավորության դեմ պայքարի տեսանկյունից:

«ՀՀ դատախազությունը կարևորում է միջազգային համագործակցությունը, որն իրականացվում է գործող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի շրջանակներում, ինչպես նաև փոխադարձության և բարի կամքի սկզբունքների հիման վրա:

Ցանկանում եմ նշել, որ Հայաստանի Հանրապետությունը սույն թվականի հունվարի 2-ից անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը, որն ընդհանուր առմամբ մեր երկրին ընձեռում է շահավետ տնտեսական հեռանկարներ, սակայն անհանգստանալու տեղիք է տալիս այն հանգամանքը, որ գլոբալիզա-

ցիայի գործընթացում, ինչը ենթադրում է միջազգային սոցիալ-տնտեսական միասնական գոտու ստեղծում, փոխվում է հանցավորության էությունը, որն արդեն կրում է սահմաններ չճանաչող անդրազգային բնույթ՝ խախտելով մեկից ավելի պետությունների օրենսդրություններ:

ԱՊՀ անդամ բոլոր պետությունների դատախազություններն իրենց ամենօրյա ուշադրության կենտրոնում են պահում տնտեսական բնույթի հանցագործությունները: Այս կապակցությամբ ցանկանում եմ նշել, որ անդրազգային հանցագործությունների ուղղվածության փոփոխությունը դեպի տնտեսական հանցագործություններ հանդիսանում է առավել վտանգավոր, քանի որ կատարվում է ինչպես հանցավոր, այնպես էլ օրինական կազմակերպությունների, ինչպես նաև մի խումբ անձանց և առանձին անհատների կողմից:

ՀՀ գլխավոր դատախազությունը կարևոր նշանակություն է տալիս այս ուղղությամբ կանխիչ և բացատրական աշխատանքներին, և այս բնագավառում դատախազական հսկողության արդյունավետությունն առավելապես կախված է օրենսդրական բազայի առկայությունից: Անդրազգային տնտեսական հանցագործությունների դեմ պայքարում գործնական քայլեր ձեռնարկելու համար վճռորոշ են օրենսդրական միջոցների մշակումը և մեր գործընկերների հետ ջանքերի միավորումը, ինչն այս ուղղությամբ ժամանակի ընթացքում կուտակված փորձի հիման վրա կարող է դիմակայել, իսկ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

հետագայում նաև կանխել այս տեսակի հանցագործությունները»,- նշել է Գ. Կոստանյանը:

ՌԴ գլխավոր դատախազ, ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի նախագահ Յու.Չայկան ՀՀ



գլխավոր դատախազ Գ. Կոստանյանին հանձնել է ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի հոբելյանական շքանշանը:

Նիստի մասնակիցները քննարկել և վերլուծել են գլխավոր դատախազություններում տեղեկատվական համակարգերի ներդրման աշխատանքային փորձը, հանցավորության, կաշառակերության, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարի փորձը, ծայրահեղական և ահաբեկչական դրսևորումների հակազդման, թմրամոլության, քաղաքացիների՝ ծայրահեղական կազմակերպություններ ներգրավելու, մարդկանց վաճառքի և ապօրինի արտագաղթի դեմ պայքարի փորձը:

Հաստատվել են գլխավոր դատախազնե-


րի համակարգող խորհրդի դրոշմ ու խորհրդանշանը, ինչպես նաև փաստաթղթեր, որոնք կարգավորում են ԳԴՀԽ համագործակցությունը Հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի և ԱՊՀ երկրների ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների ղեկավարների խորհրդի հետ:

Քննարկումների արդյունքում ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազությունների ղեկավարները ստորագրել են օրակարգի որոշումները, որոնք սահմանում են միջազգային համագործակցության առաջնային խնդիրներն առաջիկա ժամանակահատվածի համար, դատախազական հսկողության հիմնական ուղղություններով դրական փորձով փոխանակվելու և դրանք գործնականում կիրառելու վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազ **Ա. Կոնյուկը**, Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազ **Ա. Դաուլբանը**, ԱՊՀ անդամ պետությունների ԳԴՀԽ գործադիր քարտուղար **Լ. Երմոլանը**, Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազ **Ի. Աբդուլլանը**, Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազ **Ի. Ջոլդուբանան**, Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազ **Յ. Ռախմոնը**, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ **Յու. Չայկան**, Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության գլխավոր դատախազ **Յ. Ձյամինը**, Հնդկաստանի Հանրապետության գլխավոր դատախազ **Մ. Ռոհատգին** պարգևատրվել են «Անճոռուկ» հուշամեդալով:



ԵՏՄ ԱՆՂԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՏԱՆԱՅՈՒՄ



«Վախճանի դատախազը Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքում հանդիպումներ է ունեցել Ղազախստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության իր գործընկերների հետ: Քննարկվել է ԵՏՄ անդամ պետությունների միջև իրավական ոլորտում արդյունավետ համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես, քննարկվել է ԵՏՄ շրջանակում տնտեսական բնույթի հանցագործությունների դեմ համատեղ պայքարի արդյունավետ կազմակերպման համար անդամ պետությունների դատախազությունների միջև համագործակցության նոր ձևաչափի ստեղծման հարցը:

Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազ Ալեքսանդր Կոնյուկը «Վախճանի դատախազին պաշտոնապես հրավիրել է այցելել Բելառուս, որտեղ և նախատեսվում է կնքել Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազությունների միջև նոր համաձայնագիր: Երկու երկրների գլխավոր դատախազները տե-


ղում հանձնարարականներ են տվել համապատասխան ոլորտների ղեկավարներին մինչև նոյեմբեր պատրաստել նոր համաձայնագրի նախագիծը:

Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ասխատ Դաուլբաևի հետ հանդիպման ժամանակ ԵՏՄ-ի հետ կապված հարցերից և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի քննարկումից բացի Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազը հետաքրքրություն է հայտնել ուսումնասիրելու «Վախճանի դատախազության հարուստ փորձը եվրոպական կառույցների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ շփման ոլորտներում:

Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ինդիռա Ջուլդուբաևայի հետ հանդիպման ժամանակ «Վախճանի դատախազը շնորհավորել է նրան Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ: Զրույցի ընթացքում քննարկվել է հետագա համագործակցությանը վերաբերվող հարցերի լայն շրջանակ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԵՐՎԱՍՏԱՆԻ ԵՎ ՈՒՋԲԵԿԱՍՏԱՆԻ ՂԵՏԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ՇԵՏ

Հնդկաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Մուկուլ Ռոհատգիի հետ հանդիպման ժամանակ Հայաստանի Հանրապե-



տության գլխավոր դատախազը նշեց, որ երկու պետությունների միջև առկա չէ քրեական գործերով իրավական օգնության բնագավառում պայմանագիր, ինչը դժվարացնում է Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երում ուսանող

Հնդկաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից կամ նրանց նկատմամբ կատարվող հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով կարիք առաջանալու դեպքերում իրավական օգնություն ստանալը:

Հնդկաստանի Հանրապետության գլխավոր դատախազը պատրաստակամություն հայտնեց հետագայում աջակցել քրեական գործերով իրավական օգնություն տրամադրելու հարցում:

Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազ Իխտյոռ Աբդուլակի հետ քննարկվեցին հետագա համագործակցության հարցեր, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազն առաջարկեց երկու պետությունների գլխավոր դատախազությունների միջև կնքել համագործակցության ծրագիր:

Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազն առաջարկեց համաձայնագրի կարգավորման առարկայի և դրա հետ կապված այլ հարցերը քննարկել աշխատանքային կարգով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՊՅ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵՏԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՇԵՏ

Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքում կայացել է ՀՀ գլխավոր դատախազի հանդիպումը ԱՊՀ անդամ պետություն-



ների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի քարտուղարի հետ: Գ. Կոստանյանը, ընդգծելով ԱՊՀ անդամ պետությունների գլխա-

վոր դատախազների համակարգող խորհրդի կարևոր դերը միջազգային հանցավորության դեմ պայքարում, նշել է, որ միջազգային-իրավական համագործակցություն իրականացնելիս ՀՀ գլխավոր դատախազությունը սերտորեն համագործակցում է ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի հետ: ՀՀ գլխավոր դատախազը վստահություն է հայտնել, որ ԳԴՀԽ-ի շրջանակում ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազությունների միջև ստեղծված արդյունավետ իրավական համագործակցությունը հետագայում կզարգանա և կամրապնդվի ընդհանուր նպատակների փոխըմբռնման հիման վրա:

Հաշվի առնելով, որ Ադրբեջանի հետ բացակայում է իրավապահ համակարգերի միջև շփման որևէ հարթակ և այս ոլորտում ծագում են բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

են իրավական լուծումներ, Գևորգ Կոստանյանը Լեոնիդ Երմոլակի հետ քննարկել է Ադրբեյ-



ջանի իրավապահ համակարգի հետ ծագող խնդիրներին ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի քարտուղարության միջոցով լուծումներ գտնելու հնարավորությունը: ՀՀ գլխավոր դատախազը Լեոնիդ Երմոլակին է փոխանցել Ադրբեյջանում ՀՀ քաղաքացի Կարեն Պետրոսյանի մահվան դեպքի առթիվ ՀՀ իրավապահների կողմից քննվող քրեական գործով Ադրբեյջանի Հանրապետության գլխավոր դատախազությանն ուղղված քննչական պահանջն Ադրբեյջանի Հանրապետության իրավասու մարմնին փոխանցելու խնդրանքով:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ Գ.ԿՈՍՏԱՆՅԱՆԸ ԵՎ Գ.ԲԱՂԱԶՎԻԼԻՆ

2015 թվականի օգոստոսի 25-ին ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանն աշխատանքային այցով մեկնել է Վրաստան: Թբիլիսիում կայացել է երկու երկրների գլխավոր դատախազների հանդիպումը: Գ. Կոստանյանն ու Գ. Բաղաշվիլին քննարկել են Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության



դատախազությունների միջև համագործակցության ընդլայնմանը, գործառույթների հստակեցմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես, կարևորվել է Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից և Վրաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների բացահայտման, հետախուզ-

վողների հանձնման և հանցագործությունների կանխման ուղղությամբ համագործակցությունը, ինչը վերջին տարիներին բավական արդյունավետ է իրականացվում: Երկուստեք կարևորվել է մաքսային ոլորտում առկա սերտ համագործակցությունը, որի արդյունավետությունն ակնհայտ է: Գևորգ Կոստանյանը նշել է, որ միջպետական համագործակցության առումով Վրաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը հանցավորության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության հուսալի գործընկերն է: Երկու երկրների գլխավոր դատախազներն ընդգծել են նոր՝ առավել հստակ համագործակցության հնարավորություն ընձեռող հուշագիր ստորագրելու անհրաժեշտությունը: ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը շնորհակալություն է հայտնել Վրաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Գեորգի Բաղաշվիլին ջերմ ընդունելության և արդյունավետ քննարկումների համար և իր վրաց գործընկերոջը պատասխան այցով հրավիրել է Հայաստանի Հանրապետություն:

ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցության համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Վրաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Գ. Բաղաշվիլին պարգևատրվել է «Անմոռուկ» հուշամեդալով և հուշանվերով՝ ժամացույցով:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՔԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազությունում կայացել է ՀՀ գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Գ. Կոստանյանի հանդիպումը Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավել, ինչը հնարավորություն կտա ներդնել եվրոպական չափանիշներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր պետության օրենսդրության և քրեադատավարական համակարգերի առանձնահատկություններն ու ընդհանրությունները:



պել, ինչը հնարավորություն կտա ներդնել եվրոպական չափանիշներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր պետության օրենսդրության և քրեադատավարական համակարգերի առանձնահատկություններն ու ընդհանրությունները:

ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել այդ ձևաչափով համագործակցության հնարավորությունը՝ կարևորելով մարդու իրավունքների և դրա հետ կապված դատախազական գործունեությանն առնչվող գործնական և արդյունավետ ծրագրերի իրականացումը:

Մ. Լոբովի ընդհանուր ղեկավարությամբ է իրականացվելու խոշտանգումների և այլ դեպքերի կանխարգելմանը նպաստելուն ուղղված նոր ծրագիրը, որի հիմնական գործընկերներն են ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության ներկայացուցչի գրասենյակը, ՀՀ արդարադատության

վունքների քաղաքականության և համագործակցության ղեկարտամենտի ղեկավար Միխայիլ Լոբովի, ԵԽ Երևանյան գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովայի, ԵԽ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության ծրագրի ղեկավար Տիգրան Կարապետյանի ու ծրագրի համակարգող Կամիլ Գենգլոֆֆի հետ:

Հանդիպմանը քննարկվել են դատախազների ուսուցման նոր հնարավորությունների ներդրմանը վերաբերող հարցեր, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի «HELP» (Human Rights Education for Legal Professionals) էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային կամ հեռավար սկզբունքով կազմակերպվող դասընթացների կազմակերպման հնարավորությունները: Միխայիլ Լոբովն առաջարկել է եվրոպական մի քանի պետությունների մասնակցությամբ համատեղ դասընթացներ կազմակեր-

պել, ինչը հնարավորություն կտա ներդնել եվրոպական չափանիշներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր պետության օրենսդրության և քրեադատավարական համակարգերի առանձնահատկություններն ու ընդհանրությունները:

ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել այդ ձևաչափով համագործակցության հնարավորությունը՝ կարևորելով մարդու իրավունքների և դրա հետ կապված դատախազական գործունեությանն առնչվող գործնական և արդյունավետ ծրագրերի իրականացումը:

Մ. Լոբովի ընդհանուր ղեկավարությամբ է իրականացվելու խոշտանգումների և այլ դեպքերի կանխարգելմանը նպաստելուն ուղղված նոր ծրագիրը, որի հիմնական գործընկերներն են ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության ներկայացուցչի գրասենյակը, ՀՀ արդարադատության



նախարարությունը և ՀՀ արդարադատության ակադեմիան: ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի կայքէջի շնորհանդեսի ծրագիրը նույնպես իրականացվում է Մ. Լոբովի ընդհանուր ղեկավարությամբ գործող ծրագրի շրջանակներում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ՀՀ գլխավոր դատախազությունում կայացել է ՀՀ գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Գևորգ Կոստանյանի հանդիպումը Եվրոպայի խորհրդրդի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման դեպարտամենտի ղեկավար Ժենեվյեվ Մայերի, դեպարտա-

մենտ պարբերաբար անցկացվում են երկկողմ խորհրդակցություններ, որոնց ընթացքում քննարկվում են Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռների կատարման ընթացքին, առանձին գործերով կայացված վճիռների կատարողական-վերահսկողական վարույթների հնարավոր փակմանը վերաբերող հարցեր: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պատվիրակությունն ընդգծել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչի և նրա աշխատակազմի կողմից հաստատվել է ակտիվ ու արդյունավետ համագործակցություն Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման դեպարտամենտի հետ:



մենտի ղեկավարի տեղակալ Ֆրեդրիկ Սունդբերգի և դեպարտամենտի իրավաբան Վահե Դեմիրճյանի հետ: Գևորգ Կոստանյանը կարևորել է, որ դեպարտամենտի ղեկավարության

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է. Բաբայանը, ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ տեղակալ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ա. Թաթոյանը: Կողմերը քննարկել են վճիռների կատարման ընթացքին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՆԱԶՆ ՄԱՍՆԱԿՅԵԼ Է ԴԱՏԱՆԱԶՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ 7-ՐԴ ՏԱՐԱԾԱՆՐՁԱՆԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ



Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում սույն թվականի նոյեմբերի 11-ին կայացել է դատախազների միջազգային ասոցիացիայի՝ 7-րդ տարածաշրջանային կոնֆերանսն Արևելյան, Կենտրոնական Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի պետությունների համար: Կոնֆերանսին մասնակցելու նպատակով Սոչի է մեկնել ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանը:

«Ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարը» խորագրով երկօրյա կոնֆերանսին մասնակցել են 120-ից ավելի պատվիրակներ 35 պետություններից և 9 միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝ Միավորված Ազգերի Կազմակերպությունը, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը, Եվրոպայի խորհուրդը, Շանհայի համագործակցության կազմակերպությունը: Մասնակիցները ժամանել են ոչ միայն Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայից և Կենտրոնական Ասիայից, այլև Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Լատինական Ամերիկայի մի

շարք պետություններից, Արևմտյան Եվրոպայից, Մերձավոր Արևելքից, Աֆրիկայից, Արևմտյան և Հարավային Ասիայից:

Քննարկումների ընթացքում նշվել է, որ ահաբեկչության և ծայրահեղականության դրսևորումները, ազգամիջյան և միջկրոնական հակամարտությունների սրումը լուրջ վտանգ են ներկայացնում ոչ միայն առանձին պետությունների սոցիալական և քաղաքական կայունության, այլև ընդհանուր միջազգային հանրության համար: Կարևորվել է դատախազների ազգային փորձի փոխանակումն ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարում կատարելագործման և դատախազների տվյալ ուղղությամբ միջազգային համագործակցության ամրապնդման նպատակով:

ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Զայկան նշել է, որ կոնֆերանսի թեման պայմանավորված է աշխարհում սրված իրավիճակի հետ՝ նշելով. «Այժմ արդեն բոլորին պարզ է, որ այդ սպառնալիքների դեմ քաղաքացիական աշխարհը կարող է արդյունավետ պայքարել միայն

¹ Դատախազների միջազգային ասոցիացիան ոչ քաղաքական և ոչ պետական միջազգային կազմակերպություն է, որը համախմբում է աշխարհի գրեթե 150 պետությունների 250 հազար դատախազների: Այն հիմնադրվել է 1995 թվականի հունիսին ՄԱԿ-ի գրասենյակում՝ Վիեննայում: Դրա կազմավորման հիմնական պատճառն անդրազգային հանցագործությունների բարձր ցուցանիշն էր:

համատեղ ջանքերով»: Նիստում քննարկվել է ահաբեկիչների կողմից սկսած տեղեկատվական մեծ պատերազմի, ինտերնետի և առաջին հերթին սոցիալական կայքերի միջոցով իրենց շարքերում այլ պետությունների վարձկաններին ներգրավելու գործընթացի վտանգավորությունն ու այդ ուղղությամբ համատեղ կանխարգելիչ գործողությունների իրականացումը: Ընդգծվել է համագործակցության հինգ հիմնական ուղղություն՝ համագործակցության իրավական հիմքի կատարելագործում, իրավական փորձի զարգացում, միջազգային նորմերի հետ միջպետական իրավունքի համապատասխանեցման գործընթացի շարունակում, տեղեկատվական և մեթոդական ապահովման և կադրերի պատրաստման ոլորտներում համագործակցություն:

Դատախազների միջազգային ասոցիացիայի նախագահ Գերհարդ Յարոշը, ընդգծելով քննարկվող թեմայի կարևորությունը, հիշեցրել է, որ ընթացիկ տարում հենց ահաբեկչության արդյունքում մահացավ Եգիպտոսի գլխավոր դատախազ Խիշամ Բարակատը:

«Վախճանի գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը նշելով, որ ահաբեկչությունն ու ծայրահեղականությունը, ազգամիջյան և միջկրոնական հակամարտությունների սրումը լուրջ վտանգ են ներկայացնում ոչ միայն առանձին պետությունների սոցիալական և քաղաքական կայունության, այլև ընդհանուր միջազգային հանրության համար, ընդգծել է, որ գլոբալիզացված աշխարհում այլևս միջազգային սահմանները կորցրել են իրենց երբեմնի նշանակությունը և ահաբեկիչների համար խոչընդոտ չեն ոչ միայն պետական սահմանները, այլև որևէ պետության աշխարհագրական դիրքը: «Հա-

Ա.Տ. Բոնների կարծիքով՝ ՌՍՖՍՌ նախկին ՔԴՕ հոդված 294-ը դատարանին թույլ էր տալիս ստուգել որոշումը ինչպես բողոքարկված, այնպես էլ չբողոքարկված մասով, և հավասարապես բողոք չներկայացրած անձանց մասով ևս: Դա ավելի ճիշտ էր, քանի որ «այն անհամեմատ ավելի ժողովրդավարական էր և ավելի շատ էր նպաստում քաղաքացիական դատավարություններում օրինականության սկզբունքի ամրապնդմանը», չնայած նրան, որ նշված լիազորությունից վճռաբեկ դատարանն օգտվում էր բավականին հազվադեպ՝ ավելի շատ սահմանափակվելով վճռաբեկ բողոքի փաստարկներով¹²:

Մեր կարծիքով, ՀՀ Վճռաբեկ դատարանը պետք է ստուգի ստորադաս ատյանի դատարանի որոշումը ողջ ծավալով, եթե 1) վճռաբեկ դատարանը բացահայտել է ՀՀ ՔԴՕ հոդված-

ներ 227-228-ով նախատեսված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ, քանի որ տվյալ հիմքերը վկայում են որպես իրավական ակտ որոշման առօրինակ լինելու մասին, 2) գործի նյութերը վկայում են սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման մասին:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ հոդված 239-ում կատարել անհրաժեշտ լրացում՝ այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 239. գործի քննության սահմանները վճռաբեկ դատարանում

Վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Օրինականության շահերից ելնելով՝ վճռաբեկ դատարանն իրավունք ունի դուրս գալ վճռաբեկ բողոքի փաստարկների սահմաններից»:

Այս լրացումը հնարավորություն կտա վճռաբեկ դատարանին, օրինականության շահերից ելնելով, ստուգել ստորադաս ատյանի դատարանի ընդունած դատական ակտը լրիվ ծավալով, որի արդյունքում վճռաբեկ դատարանի որոշումը կլինի ավելի հիմնավոր և պատճառաբանված: Այս լրացումը կնպաստի նաև ստորադաս ատյանի դատարանների կողմից կամայականությունների վերացմանը, նախականիչ նշանակություն կունենա դատական պրակտիկայի վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ դատարանն իրավունք է ստանում ստուգել դատարանի որոշումը լրիվ ծավալով՝ անգամ չբողոքարկված մասով:

Ինչպես վերը նշվեց, վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում (ՀՀ ՔԴՕ հոդված 239): Վճռաբեկ դատարանը, իհարկե, գործում գտնվող հիմքերի հետ միասին հաշվի է առնում (գնահատում է) նաև բողոքին կից կամ բողոքի կապակցությամբ լրացուցիչ ներկայացված նյութերը՝ բողոքարկված ակտն անփոփոխ

¹¹ Տե՛ս Жуikov В. М., “Проблемы гражданского процессуального права” М., 2001, ст. 51-57.

¹² Տե՛ս Боннер А. Т., “Установление обстоятельств гражданских дел”. М., 2000, ст. 229.

թողնելու կամ այն բեկանելու և գործը նոր քննության վերադարձնելու հարցը ճիշտ լուծելու, այսինքն՝ վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջները բավարարելու կամ մերժելու համար:

Լրացուցիչ նյութերի բնույթի մասին հարցը գրականության մեջ և դասական պրակտիկայում համարվում է վիճելի: Որոշ դատավարագետներ լրացուցիչ նյութերի շարքին են դասում միայն ապացույցները¹³, մյուսներն ավելի լայն են մեկնաբանում «նյութեր» հասկացությունը՝ դրանում ներառելով ոչ միայն այն, ինչը համարվում է ապացույց այդ բառի դատավարական իմաստով, այլ նաև այս կամ այն փաստերի վերաբերյալ քաղաքացիների գրավոր դիմումները, իրավասու անձանց կարծիքները՝ շարադրված գրավոր ձևով, դատավարական ուժ չունեցող ապացույցները և այլն¹⁴:

Ինչպես արդարացիորեն նշում է Ա.Տ. Բոնները, քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կա «նոր ապացույցներ» և «լրացուցիչ ներկայացված նյութեր» տերմինների ամրագրման անհրաժեշտություն¹⁵:

Եթե առաջին կամ վերաքննիչ ատյանի դատարանները պարտավոր են միջոցներ ձեռնարկել ներկայացված ապացույցներն ուսումնասիրելու միջոցով հատկացնել գործի իրական հանգամանքները, ապա վճռաբեկ դատարանը գոյություն ունի նրա համար, որպեսզի ստուգի գործի հանգամանքների վերաբերյալ դատարանի եզրահանգումների ճշտությունը:

Լրացուցիչ նյութերն ապացույցներ չեն համարվում, քանի որ վճռաբեկ դատարանը դրանք անմիջականորեն չի հետազոտում, սակայն դրանք ներկայացվում են վճռաբեկ դատարան, որպեսզի վերջինս կարողանա որոշել, թե առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանների կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն արդյոք ճիշտ են հաստատվել, թե՛ ոչ: Լրացուցիչ ապացույցներ են ներկայացվել, օրինակ՝ հետևյալ դեպքերում՝

- եթե ապացույցները գոյություն են ունեցել ստորադաս ատյանի դատարանի կողմից գործը քննելու պահին, բայց դրանք ներկայացնող անձը չի իմացել և չէր կարող իմանալ դրանց գոյության մասին,
- եթե ապացույցները գոյություն են ունեցել ստորադաս ատյանի դատարանի կողմից գործը քննելու պահին, և անձն իմացել է այդ մասին, բայց իրենից չկախված հանգամանքներով դրանք չի ներկայացրել դատարան,
- եթե լրացուցիչ ապացույցներն ի հայտ են եկել ստորադաս ատյանի դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո,
- եթե ստորադաս ատյանի դատարանը սխալմամբ բացառել (հանել) է դատական քննությունից անձի կողմից ներկայացված ապացույցները, որոնք կարող էին էական նշանակություն ունենալ գործի ճիշտ լուծման համար,
- եթե ստորադաս ատյանի դատարանն անհիմն ձևով մերժել է անձին ուսումնասիրելու այն ապացույցները, որոնք կարող էին էական նշանակություն ունենալ գործի ճիշտ լուծման համար:

Բոլոր այն դեպքերում, երբ գործերով շոշափվում են սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը (այնպիսի անձանց, ինչպիսիք են՝ ազատագրված անձանց, կրողները, քաղաքացիները, որոնց նկատմամբ հարուցվել է վարույթ հոգեբուժական հաստատությունում հարկադիր հոսպիտալացման մասին, անգործունակ ճանաչված անձինք, անչափահասները, հաշմանդամները, ծերերը և այլն), անհրաժեշտ է նրանց կարգավիճակը դիտել որպես հարգելի պատճառ ստորադաս ատյանի դատարանում ապացույցներ չներկայացնելու համար՝ չսահմանափակելով նրանց իրավունքը ներկայացնելու նոր ապացույցներ վճռա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

¹³ Տե՛ս Ազարов В. В., “Принятие дополнительных доказательств арбитражным судом апелляционной инстанции и принцип состязательности” // Арбитражный и гражданский процесс. 2003. N 11, ст. 24-26, Нагорная Э. Н., “Производство в кассационной инстанции арбитражного суда”. М., 2000, ст. 63.
¹⁴ Տե՛ս Абрямов С. Н., “О новых материалах при рассмотрении гражданских дел в кассационном порядке” // Правоведение, 1961. N 3, ст. 103-109, Боннер А. Т., “Установление обстоятельств гражданских дел”. М., 2000, ст. 295, Францифоров Ю. В., Цибулевская О. И., Громов Н. А., “Понятие дополнительных (новых) материалов, представляемых в кассационные и надзорные инстанции в сфере гражданского судопроизводства” // Российский судья. М., Юрист. 2000, N 4, ст. 37-39.
¹⁵ Տե՛ս Боннер А. Т., “Установление обстоятельств гражданских дел”. М., 2000, ст. 296.

բեկ դատարանում: Այդ կերպ սահմանվում են լրացուցիչ երաշխիքներ դատական պաշտպանության իրավունքի իրականացման համար: Լրացուցիչ նյութերը հնարավորություն են տալիս վճռաբեկ դատարանին ստուգելու վերանայվող դատական ակտերի հիմնավորվածությունը: Իսկ դա անհրաժեշտ է, քանի որ դատավարական օրենքը յուրաքանչյուր ակտի միաժամանակ առաջադրում է երկու պահանջներ, մասնավորապես՝ այն պետք է լինի նաև օրինական, նաև հիմնավորված (ՀՀ ՔԴՕ հոդված 130):

Երբ լրացուցիչ նյութերը վկայում են, որ գործի փաստական հանգամանքները գործն ըստ էության լուծելիս սխալ են որոշվել կամ անհրաժեշտ ապացույցներով հաստատված չեն, որը հանգեցրել է գործի սխալ լուծման, ապա վճռաբեկ դատարանը բեկանում է վճիռը (ՀՀ ՔԴՕ հոդված 228-ի 1-ին կետ):

Որոշման կայացմամբ վճռաբեկ դատարանում ամփոփվում է գործի քննության արդյունքները:

Վճռաբեկ դատարանի որոշումները քաղաքացիական գործերով կոլեգիալ դատարանի որոշումներն են, որոնցում արտացոլվում են ստորադաս ատյանի դատարանների վճիռների և որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման և դրանցում թույլ տրված սխալների ուղղման արդյունքներն՝ օրենքով վճռաբեկ դատարանին տրված լիազորությունների շրջանակներում: Ստորադաս ատյանի դատարանի որոշումը բեկանելու դեպքում գործը նոր քննության չուղարկելով հանդերձ վճռաբեկ դատարանը կարող է ընդունել նոր որոշում, որը նույնպես ձևակերպվում է վճռի ձևով, չնայած նրան, որ տվյալ դեպքում որոշման իրավական ձևը համապատասխանում է առաջին ատյանի դատարանի վճռի իրավական ձևին (նման վճռով (որոշմամբ) դատարանը ամբողջությամբ կամ մասամբ լուծում է գործն ըստ էության):

Մ.Ս. Շաքարյանի կարծիքով ավելի բարձր ատյանի դատարանի վճիռը, որով փոփոխվում

է առաջին ատյանի դատարանի որոշումը կամ կայացվում է նոր որոշում, նպատակահարմար կլինի անվանել որոշում¹⁶: Նշված դիրքորոշման հետ մենք լիովին համաձայն ենք:

Տվյալ հարցում հակառակ տեսակետ է արտահայտում Լ.Ֆ. Լեսնիցկայան: Նա կարծում է, որ ավելի բարձր ատյանի դատարանի կողմից վճռի կայացման կարգն ու պայմանները տարբերվում են առաջին ատյանի դատարանի կողմից դրանց կայացման կարգից ու պայմաններից, այդ հանգամանքն արտահայտվում է, մասնավորապես՝ փաստաթղթի անվանման մեջ, որով ավարտվում է վճռաբեկ դատարանի կողմից գործի քննությունը¹⁷:

Դատական ակտերը դասակարգելիս պետք է հաշվի առնել դատական իրավակիրառ համակարգում յուրաքանչյուր վճռի ոչ միայն ֆունկցիոնալ (գործառնական) նշանակությանը, այլ նաև արտացոլել դրա յուրահատկությունը: Որոշումը վճիռ է, որով գործը լուծվում է ըստ էության, այն պետք է պատասխանի բոլոր պահանջներին¹⁸:

Եթե վճռաբեկ դատարանը ընդունում է նոր որոշում, այն ևս պետք է կայացվի վճռի ձևով, այլ ոչ թե որոշման, քանի որ որոշումը ծառայում է որպես քաղաքացիական դատավարության եզրափակիչ ակտ, փոխարինում է վճռին որպես դատավարության ավարտ¹⁹:

Գործի քննության արդյունքում վճռաբեկ դատարանը հանուն Հայաստանի Հանրապետության որոշում է կայացնում: Որոշումը կայացվում է բողոք բերած անձի և վճռաբեկ դատարանի նիստին բացատրություններ տալու համար կանչված անձանց բացակայությամբ: Վճռաբեկ դատարանի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա դատավորների մեծամասնությունը: Որոշումը կայացվում է բաց քվեարկությամբ, որն ստորագրում են այն կայացրած դատավորները: Որոշումը հրապարակվում է նիստում (ՀՀ ՔԴՕ հոդված 241):

¹⁶ Տե՛ս Шакарян М. С., “Субъекты гражданского процессуального права”. М., 1970. ст. 50.

¹⁷ Տե՛ս Лесницкая Л. Ф., “Пересмотр решения суда в кассационном порядке”. М., 1974. ст. 143.

¹⁸ Տե՛ս Ткачева Н. И., “Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам”. Саратов, 1987, ст. 11.

¹⁹ Տե՛ս Малышев К. И., “Курс гражданского судопроизводства Т. 1, СПб., 1874 // В. кн. Геражданский процес. Хрестоматия: Учебное пособие” / Под ред. М. К. Треушникова. М., 2005. ст. 542.

ՆԵԼԼԻ ԱՐԱՐԱԲՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի «Քրեական դատավարություն և
կրիմինալիստիկա» ամբիոնի ասպիրանտ

**ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՁԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԱՐՈՒՅԹՈՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿԱՐՃԵԼԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ
ՀԵՏԱԿՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ**

Անչափահասությունն անձին բնութագրող այն հատկանիշն է, որը սահմանում է նրա հատուկ կարգավիճակը քրեական դատավարությունում: Այն դրանով օժտված անձին ընձեռում է առանձնահատուկ հնարավորություններ, որոնք արտացոլվում են քրեական գործերի ըստ էության լուծման մեխանիզմում: Համանման մեխանիզմներից է քրեական գործի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումը:

Ի թիվս այն հիմքերի, որոնք բազմաթիվ երկրների քրեադատավարական օրենսդրություններ նախատեսում են քրեական հետապնդման ենթարկվող անձանց համար, անչափահասներին տրվում են լրացուցիչ հիմքեր, որոնցից է նրանց տարիքը՝ չափահասության հասած չլինելը¹:

Անչափահասների նկատմամբ գործերի վարույթները պետք է տարբերվեն բոլոր այլ քրեական գործերի վարույթներից հնարավորինս բարենպաստ պայմանների ապահովմամբ, որոնք առավելագույնս կնպաստեն անչափահասների իրավունքների և օրինական շահերի ապահովմանը²: Այսինքն՝ պետք է գոյություն ունենա յուրվե՛նալ արդարադատության հատուկ համակարգ, որը կերաշխավորի արդարացի արդարադատություն անչափահասների նկատմամբ:

Այսպես, Կոնվենցիայի 40 հոդվածի 3-րդ

մասում հանձնարարվել է պետություններին սահմանել ընթացակարգեր օրինախախտ անչափահասների նկատմամբ՝ առանց դատաքննություն իրականացնելու: Նախաքննության փուլում անչափահասի նկատմամբ քրեական գործը կարճելը լիովին համապատասխանում է այդ պահանջին: Ելնելով վերոնշյալ դրույթից՝ ակնհայտ է դառնում, որ միջազգային հանրությունը, գիտակցելով դատական քննության ներգործության ուժն անչափահասների դեռևս ոչ լիովին ձևավորված հոգեկանի վրա, ձգտում է պաշտպանել նրանց դրանից: Ընդ որում, նկատելի է այն միտումը, որ օրինախախտ անչափահասը չհայտնվի հասարակությունից դուրս, համենայն դեպս հասարակության այն հատվածից, որն ունակ է խթանելու և զարգացնելու նրա մեջ սոցիալապես օգտակար հատկանիշներ: Դրանով է պայմանավորված նաև տարբեր երկրների օրենսդրություններում քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգերի արժեքավորությունը, որոնցում դրա համար գլխավոր հիմքերից մեկը դառնում է անչափահաս անձի տարիքը, որի նկատմամբ հարուցվել է քրեական գործը:

Ինչպես արդեն նշել ենք, հենց հոգեկանի առանձնահատկությունները հաշվի առնելու և դրա վրա բացասական ներգործություն թույլ չտալու այդ ձգտումով է պայմանավորված ՀՀ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

¹ St’u Касьянова Е. В., “Особенности прекращения уголовного преследования в отношении несовершеннолетних правонарушителей в связи с применением к ним принудительных мер воспитательного воздействия // Обеспечение прав и законных интересов несовершеннолетних: научные статьи и материалы всероссийского круглого стола, проведенного 16 ноября 2011 года на базе юридической клиники Воронежского института МВД России”. - Воронеж: Воронеж. ин-т МВД России, 2012, ст. 13-18, Белоусова Е. А., “О некоторых вопросах прекращения уголовного дела (уголовного преследования) в отношении несовершеннолетнего // Криминалистика”. - Изд-во Петерб. юрид. ин-та Академии Ген. прокуратуры РФ, 2010, № 2 (7), ст. 50-53.

² St’u Серкеров С. Э., “Конвенция ООН о правах ребенка и стандарты ювенальной юстиции // Конвенция ООН о правах ребенка: опыт и перспективы реализации: Материалы Всероссийской научно-практической конференции. 18-19 ноября 2009 г.” - Махачкала: ИП Овчинников, 2009, ст. 320-325.

քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ գլխի գոյությունը, որը կարգավորում է անչափահասների գործերով վարույթների առանձնահատկությունները: Այդ գլխի դրույթներն ընդհանուր առմամբ համապատասխանում են «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներին: Այդուհանդերձ դրանք չեն սպառում հարցերի ամբողջ ցանկը, որոնք ենթակա են լուծման ըստ անչափահասների իրավունքների և օրինական շահերի երաշխավորումն ապահովող միջազգային նորմերի: Մասնավորապես, դա վերաբերում է քրեական գործը կարճելու հնարավորությանը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մեղադրյալն անչափահաս է:

Այստեղ մի կողմից կարելի է առանձնացնել ազգային քրեադատավարական օրենսդրության անհետևողականությունը միջազգային փաստաթղթերում ամրագրված սկզբունքների իրականացման հարցում: Սակայն, մյուս կողմից, միանգամայն ակնհայտ են հակասությունները, որոնք թաքնված են նույն այդ սկզբունքներում: Այսպես, մի կողմից, ինչպես նշվեց, անչափահասների համար պետք է սահմանվեն առանց դատական քննության անցկացնելու ընթացակարգեր, իսկ մյուս կողմից, «Երեխայի մասին» կոնվենցիայի 40 հոդվածում հատուկ շեշտադրվում է անչափահասների նկատմամբ անմեղության կանխավարկածը պահպանելու անհրաժեշտությունը: Սակայն անմեղության կանխավարկածը ենթադրում է դատաքննություն: Այսպես, ըստ Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11 հոդվածի 1-ին մասի՝ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվել, քանի դեռ իր մեղքն օրենքով չի հաստատվել հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները:

Միանգամայն ակնհայտ է, որ վերոնշյալ երկու պահանջներին հետևելը կհանգեցնի տրամաբանական հակասության, որի էությունն այն է, որ մեկին ճշգրտությամբ հետևելիս անխուսափելիորեն կխախտվի մյուսը: Այսպես, առանց դատական քննության անչափահասի նկատմամբ ընթացակարգեր կիրառելու պահանջն անհնար է դարձնում անմեղության կանխավարկածի սկզբունքը պահպանելը, քանի որ առանց դատական քննության դա իրականացնելն անհնար է:

Ընդհանուր առմամբ, նշյալ հակասությունը բնորոշ է ոչ միայն անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն, այլև, առհասարակ, նախաքննության փուլում ցանկացած տեսակի քրեական հետապնդում դադարեցնելուն³: Այն արդեն բավականին վաղուց է դիտվում որպես քրեադատավարական օրենսդրության էական հիմնախնդիրներից մեկը, որը միանշանակ լուծում մինչ օրս չի ստացել: Մասնավորապես, այդ խնդրին ուշադրություն է դարձրել հայտնի խորհրդային գիտնական-դատավարագետ Մ. Ս. Ստրոգովիչը, ով հետազոտել է ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդման դադարեցումը: Նա ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմերի կառուցվածքն ինքնին ենթադրում է անձի կողմից համապատասխան հանցագործությունը կատարելու մեղավորության ընդունում⁴: Եվ դա բնորոշ է ոչ միայն նախկինում գործող խորհրդային քրեադատավարական օրենսդրության նորմերի կառուցվածքին, այլև ներկայումս գործող ՀՀ քրեադատավարական օրենսդրությանը: Օրինակ՝ քրեական հետապնդման դադարեցումը գործուն զղջալու հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 37) ենթադրում է, որ անձը, ում նկատմամբ կայացվում է քրեական գործը կարճելու մասին որոշում, մեղավոր է համապատասխան

³ Տե՛ս Остромухов Л. Б., “Презумпция невиновности при прекращении уголовных дел по нереабилитирующим обстоятельствам // Юридическая мысль.” - С-Пб.: Изд-во юрид. ин-та (Санкт-Петербург), 2012, № 4 (72), ст. 61-67, Рига В., “Прекращение уголовного дела по нереабилитирующим основаниям и презумпция невиновности: проблемы и перспективы // Дни науки: Материалы научно-практической конференции факультета государственного и международного права.” - Иркутск: Изд-во БГУЭП, 2010, ст. 241-244.

⁴ Տե՛ս Строгович М. С., “Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву”. М.: Изд-во «Наука», 1979, ст. 171.

հանցագործությունը կատարելու մեջ⁵: Նույնը բնորոշ է նաև այլ հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմերի կառուցվածքին (իրադրության փոփոխություն և այլն):

Հարկ է նշել, որ վերոհիշյալ հիմքերը ծանոթ են ոչ միայն ԱՊՀ երկրների, այլև այլ երկրների քրեադատավարական օրենսդրությանը: Այսպես, այնպիսի հիմքը, ինչպիսին քրեական հետապնդման դադարեցումն է, պայմանավորված կատարված հանցագործության աննշան լինելու հետ, նախատեսված է Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հոդված 153-ով: Այստեղ նաև ենթադրվում է, որ դադարեցման պայմաններից մեկն էլ անձի կողմից համապատասխան հանցագործությունը կատարելու փաստն է: Սակայն Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեադատավարական օրենսդրությանը հաջողվում է խուսափել վերը նշված հակասություններից, քանի որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը կայացվում է դատական քննության ժամանակ:

Այս առումով միանգամայն տրամաբանական կլիներ քրեադատավարական օրենսդրությունում քննարկվող հիմնախնդիրը լուծել այնպես, ինչպես Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, այսինքն՝ քննել քրեական հետապնդումը դադարեցնելու հարցերը ոչ թե նախաքննությունն իրականացրած անձանց կողմից, այլ դատական քննության ընթացքում:

Սակայն անչափահասի նկատմամբ նման կերպով քրեական հետապնդումը դադարեցնելիս վերանում է հակասություններից միայն մեկը՝ նախաքննության ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ անձի կողմից իր մեղքը փաստացի ընդունելու և անմեղության կանխավարկածի միջև, որը ենթադրում է, որ մեղքը հաստատվում է միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած

դատավճռի կայացումից հետո, իսկ մյուս հակասությունը՝ անմեղության կանխավարկածի և «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի միջև մնում է, որի համաձայն անչափահասների նկատմամբ անհրաժեշտ է կիրառել ընթացակարգեր՝ առանց դատական քննություն իրականացնելու:

Նախաքննության ընթացքում քրեական գործը ոչ արդարացնող հիմքերով կարճելու և անմեղության կանխավարկածի միջև առկա հակասությունը լուծելու մասնակի փորձ կարելի է համարել տվյալ դատավարական գործողությունը նախատեսող նորմերի կառուցվածքը: Այն նախատեսում էր, որ անձը, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդումը, ինքն ընդունի իր մեղքը: Դրա օրինակը քրեական գործի կարճումն է գործուն զղջալու դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 37), որում անձի կողմից իր մեղքն ընդունելը քրեական գործը կարճելու հիմքի էությունն է: Կարևոր երաշխիք պետք է համարել օրենքում սահմանված այն պահանջը, որ քրեական գործը կարճելն այնպիսի հիմքերով, ինչպիսին գործուն զղջալն է, տուժողի հետ հաշտվելը կամ իրադրության փոփոխությունը, չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այսինքն, ինչպես տեսնում ենք, քրեական գործը կարճելու համար պահանջվում է համապատասխան անձի համաձայնությունը, թեկուզ և դա արտահայտվի այն ձևով, որ նա առարկություն չհայտնի քրեական գործը կարճելու դեմ:

Ինչպես տեսնում ենք, նախաքննության ընթացքում ոչ արդարացնող հիմքերով քրեական գործը կարճելու և անմեղության կանխավարկածի միջև հակասության հիմնախնդիրը քրեադատավարական օրենսդրությամբ լուծվում է նման կերպ, մասնավորապես քրեական գործը լուծելու վերաբերյալ մեղադրյալի համաձայնությունը ստանալու միջոցով⁶: Այսինքն՝ փաստացի նշված հիմքերով քրեադատավար

⁵ Տե՛ս Գурулев Д., “Прекращение уголовных дел в связи с деятельным раскаянием // Законность”. - М., 2014, № 7, ст. 42-45.

⁶ Տե՛ս Перетокин С. Н., “Необходимость получения согласия освобождаемого от уголовной ответственности лица на прекращение уголовного дела по нереабилитирующим основаниям как гарантия охраны прав и свобод человека и гражданина // Досудебное производство: проблемы и перспективы. Материалы межведомственной научно-практической конференции, посвященной 5-летию принятия Уголовно-процессуального кодекса Российской Федерации”. - М.: МосУ МВД России, 2007, ст. 131-136.

րական օրենսդրությունն առաջարկում է մեղադրյալին իր մեղքն ընդունելու դիմաց քրեական գործը կարճել կամ քրեական հետապնդումը դադարեցնել: Ընդ որում, պետք է ընդգծել, որ օրենսդրության մեջ սեփական մեղքը ընդունելը՝ որպես քրեական հետապնդումը դադարեցնելու պայմաններից մեկը, անմիջական հիշատակում չկա: Թեև մեղադրյալի կողմից առարկություն չունենալը, ինչը պահանջվում է քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում, ոչ այլ ինչ է, քան նրա կողմից իր մեղքի ընդունում:

Ոչ արդարացնող հիմքերով քրեական գործը կարճելիս մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելն ըստ էության այնքան նշանակալի է, որ ամբողջովին ապահովում է քրեական գործով համապատասխան որոշում կայացնելու հնարավորությունը: Դրանում նկատելի է որոշակի նմանություն գաղափարախոսական այն հայեցակարգին, որը մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելը բնորոշվում էր որպես «ապացույցների թագուհի»: Միանգամայն ակնհայտ է, որ հենց դա էլ հետ է թողնում տեսությունն արդեն կատարված փաստից, որի էությունն այն է, որ մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելն իսկապես կարող է հանդես գալ որպես հիմնական պայմաններից մեկը, որով պայմանավորված է ինչպես քրեական գործի շարժման ուղղությունը, այնպես էլ դրան տրվելիք լուծումը:

Ընդ որում, այնուամենայնիվ մեղադրյալի կողմից իր մեղքը փաստացի ընդունելը չի կարելի դիտարկել որպես քրեական գործով «ապացույցների թագուհի», որով դադարեցվում է քրեական հետապնդումը: Այն պետք է դիտարկել միայն որպես պայմաններից մեկը, որը պարտադիր է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին հարցը համապատասխան ձևով լուծելու համար: Ընդ որում, որպես քրեական հետապնդումը դադարեցնելու պայման մեղքն ընդունելը և այն որպես «ապացույցների թագուհի» ճանաչելու միջև տարբերությունն այն է, որ առաջին դեպքում մեղքը ընդունելը որևէ մեկի մեղավորությունը հիմնավորելու միջոց չէ, այլ միայն պայման, որը կատարելը կոչված է երաշխավորելու այն անձի իրավունքները, ով ընդունում է իր մեղքը: Այսպես, միանգամայն ակնհայտ է, որ շատ դեպքերում, երբ անձը լիովին համոզված է իր անմեղության մեջ, քա-

նի որ կապ չունի կատարված հանցագործության հետ, որը մեղսագրվում է նրան, իրավունք ունի վիճարկելու դա ոչ միայն նախաքննության ժամանակ, այլև դատարանում: Ուստի, համապատասխան մեղադրյալին իրավունք է տրվում ինքնակամ, առանց որևէ պարտադրանքի վճռելու իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորության հարցը կամ էլ հասնելու իր իրավունքներն ու օրինական շահերը դատական քննության ընթացքում պաշտպանելուն: Այսինքն՝ ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելիս իր մեղքն ընդունելը ոչ այլ ինչ է, քան պայման, որը կատարելը երաշխավորում է կոնկրետ մեղադրյալի իրավունքներն ու օրինական շահերը:

Ասվածը թույլ է տալիս խոսել ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու հատուկ իրավական կառուցվածքի մասին, որում անձի կողմից իր մեղքի փաստացի ընդունումը չի դիտվում որպես գործողություն, որը մյուս գործողությունների ամբողջության մեջ աջակցում է քրեական հետապնդմանը և կարող է հանգեցնել այդ անձի պարտությանը՝ նրա իրավունքների պաշտպանության առումով: Ընդհակառակը, նշյալ գործողությունը հանգեցնում է երաշխիքների առաջացմանը՝ ուղղված ինքն իրեն փաստացի մեղավոր ճանաչած անձի իրավունքները և օրինական շահերն ավելի ուժեղ պաշտպանելուն: Բացի այդ, ոչ արդարացնող հիմքերով քրեական գործը կարճելու դեպքում մեղքն ընդունելուն բնորոշ է նաև այն, որ այն չի ընդունում ապացույցի ձև և ուժ, ինչը կարող է հետագայում օգտագործվել: Այսինքն՝ ակներև է, որ նշյալ կառուցվածքը, ըստ օրենսդրի, կոչված է հարմարեցնելու անմեղության կանխավարկածը մեղադրյալի կողմից իր մեղքը փաստացի ընդունելու հետ՝ որպես ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու պայմաններից մեկը:

Ըստ այդմ՝ անչափահասների նկատմամբ քրեական գործերը կարճելու համար անհրաժեշտ է կան տվյալ անչափահասի, կան նրա օրինական ներկայացուցիչների համաձայնությունը: Սա կարևոր երաշխիք է անչափահաս անձի իրավունքների պաշտպանության ապահովման համար: Այսինքն՝ օրենսդրությունը

պետք է նախատեսի այլընտրանք քրեական հետապնդումը դադարեցնելու համաձայնությունն ստանալու համար: Անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունն օրենսդրությունը լիովին հանձնում է քննիչին ու դատախազին: Թերևս, այս դեպքում անչափահաս մեղադրյալները հայտնվում են ավելի վատ վիճակում, քան այն անձինք, որոնց նկատմամբ քրեական հետապնդումը կարող է դադարեցվել գործուն զղջալու, տուժողի հետ հաշտության կամ իրադրության փոփոխության հիմքերով:

Ի տարբերություն քրեադատավարական գործող օրենսդրության, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 423-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ (...) քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում են անչափահաս մեղադրյալը կամ նրա օրինական ներկայացուցիչը: Այսպիսի կարգավորումն արդարացված է, քանի որ բնավ ոչ միշտ է անչափահաս մեղադրյալն ի վիճակի ճիշտ գնահատելու քրեական գործը կարճելու հետևանքները և դրա ցանկալի լինելն իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար: Ուստի հաճախ կարիք է լինում դիմելու հասուն մարդու, որն իր կենսափորձի և ձեռք բերած գիտելիքների հիման վրա կարող է ավելի խորությամբ հասկանալ իրավիճակը և հետևություն անել, թե որքանով է ընդունելի ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճումն անչափահասի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար: Դրանով իսկ միանգամայն արդարացված է այդ անչափահասի օրինական ներկայացուցչի՝ որպես կարևոր անձի ներգրավումը, ում համաձայնությունը էական նշանակություն ունի անչափահասի քրեական հետապնդումը դադարեցնելու հարցում:

Սակայն հենց նշյալ տրամաբանությունը թույլ է տալիս փոքր-ինչ այլ հետևություն անել, ըստ որի ավելի ցանկալի է, որ այդ երկուսն էլ՝ մեղադրյալը և նրա օրինական ներկայացուցիչը, միաժամանակ առարկություն չունենան քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ: Այսինքն՝ նշված տրամաբանությունից ելնելով, ստացվում է, որ ավելի ճիշտ է ոչ թե անձի այլ-

ընտրանքային ընտրությունը, որի առարկության բացակայությունն անհրաժեշտ է քրեական հետապնդումը դադարեցնելու համար, այլ նման առարկությունների բացակայությունը միաժամանակ երկուսի կողմից էլ: Ընդ որում, ցանկալի է նախապատվությունը տալ անչափահասի օրինական ներկայացուցչի կարծիքին, քանի որ անչափահասն աննշան կենսափորձի և գիտելիքների պատճառով ոչ միշտ է ունակ ճիշտ գնահատելու իրավիճակը և դրանից հետևություն անելու իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու ռազմավարության վերաբերյալ: Այդուհանդերձ, դա չպետք է անչափահաս մեղադրյալի կարծիքը հաշվի առնելուց հրաժարվելու պատճառ դառնա, քանի որ հենց նրա իրավունքներն ու օրինական շահերն են պաշտպանվում, ուստի և նա էլ պետք է հնարավորություն ունենա ակտիվորեն պաշտպանելու դրանք: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նշյալ դրույթը ներառելիս հարկավոր է միաժամանակ հաշվի առնել ինչպես անչափահաս մեղադրյալի կարծիքը, այնպես էլ նրա օրինական ներկայացուցչի:

Անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմը ներդնելու հնարավորության ու անհրաժեշտության վերաբերյալ հարցը վճռելիս հարկավոր է կողմնորոշվել, թե ինչու է այդ մեխանիզմն անհրաժեշտ պետությանը, հասարակությանը և հենց անձին: Ելնելով անչափահասի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը կարգավորող քրեադատավարական նորմերի վերլուծությունից՝ ակնհայտ է դառնում, որ այդ մեխանիզմը միջոց է, որն օգտագործելով պետությունը և հասարակությունը ձգտում են ոչ դատական կարգով լուծելու անչափահասների հանցավորության որոշակի հիմնախնդիրներ:

Ներկայումս բազմաթիվ երկրների օրենսդրության և միջազգային փաստաթղթերի վերլուծությունից երևում է, որ նշյալ հիմնախնդիրը լուծվում է ոչ թե հակադրվելու միջոցով, որտեղ հակառակ կողմերն են մի կողմից՝ պետությունը, մյուս կողմից՝ հանցանք գործած անչափահասները, այլ այնպիսի պայմաններ ստեղծելու միջոցով, որոնց առկայության դեպքում անչափահասն ինքն էլ գիտակցի իր կատարածի անթույլատրելի ու անընդունելի լինելը և հրաժար-

վի հետագայում նման գործողություններ կատարելուց: Այսինքն՝ նման մոտեցմամբ անչափահաս իրավախախտը դիտվում է ոչ թե որպես հասարակության թշնամի, որին հարկավոր է առնվազն մեկուսացնել, այլ որպես սխալված, դժվար իրավիճակում չկողմնորոշված անձ, ով այդ առումով օգնության կարիք ունի, և հարկավոր է բացատրել նրան, որ հետագայում անթույլատրելի է նման գործողություններ կատարելը: Ընդ որում՝ պետության առջև խնդիր է դրված այնպես բացատրել նրան հետագայում հանցավոր գործողություններ կատարելու անթույլատրելի լինելը, որ դա անուղղելի վնաս չհասցնի անչափահասի հոգեկանին, չնսեմացնի նրան հասակակիցների, մերձավորների և ընդհանրապես հասարակության աչքում: Այսինքն՝ պետությունն ու հասարակությունը ճիշտ ուղուց շեղված անչափահասին նույնիսկ դիտում են որպես իրենց լիիրավ անդամ, որի ճակատագրով է պայմանավորված իրենց կայուն զարգացումը: Նման ռազմավարությունը ենթադրում է պատժիչ տարրի մեղմում անչափահաս մեղադրյալների (կասկածյալների) նկատմամբ կիրառվող ընթացակարգերում արդարադատություն իրականացնելիս⁷:

Նշյալ ռազմավարությունը պետք է ընկած լինի անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացումը կարգավորող նորմերի հիմքում:

Ցավոք, պետք է խոստովանել, որ քրեադատավարական օրենսդրությունը չի կարողացել լիովին խուսափել հանցագործություններ կատարած անչափահաս մեղադրյալների ստիգմատիզացումից և նույնիսկ նրանց նկատմամբ քրեական գործը ոչ արդարացնող հիմքով կարճելու դեպքում, երբ այդ դատավարական գործողությունը կիրառելու պայմանը նրանց տարիքն է: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում այնուամենայնիվ նման փորձ ձեռնարկվել է, մասնավորապես՝ 423 հոդվածի համաձայն՝ եթե մինչդատական վարույթում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի քննության ընթացքում պարզվում է, որ առաջին անգամ հանցանք կատարած անչափա-

հաս մեղադրյալի ուղղումը հնարավոր է առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, ապա հսկող դատախազը, քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և հարուցում է անչափահաս մեղադրյալին նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն, որը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է դատարանին:

Այսպիսի կարգավորումը համապատասխանում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 40 հոդվածին, որը հանձնարարական է տալիս անչափահասների իրավախախտումների հետ կապված հարցերը քննելու և լուծելու առանց դատական քննության: Քրեական դատավարության գործող օրենսդրությունն այս առումով թերի է, որովհետև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները նույնն են, ինչ կիրառվում է չափահաս մեղադրյալների նկատմամբ: Այսինքն՝ նախքան անչափահաս մեղադրյալի նկատմամբ քրեական գործը դադարեցնելը կիրառվում են այն նույն ընթացակարգերը, ինչ բոլոր մյուս անձանց նկատմամբ, ովքեր մեղադրվում են հանցագործություն կատարելու մեջ:

Թեև քրեադատավարական օրենսդրությամբ անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելն իրականացվում է ոչ թե դատական նիստում, այլ նախաքննության ժամանակ, սակայն այդ դեպքում էլ, միևնույն է, կիրառվում են հիմնականում այն նույն ընթացակարգերը, որոնք կիրառվում են չափահասների նկատմամբ, հետևաբար և հաշվի չեն առնում անչափահաս լինելու առանձնահատկությունները:

Բացի այդ, անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ձևն ինքնին ստիգմատիզացման գործոն է, քանի որ, ինչպես վերը նշվեց, նշյալ դատավարական գործողությունը կարող է իրականացվել

⁷ St' u Solonina C. Ю., «Сравнительный анализ институтов прекращения уголовного дела в отношении несовершеннолетних (на примере стран СНГ) // Общественная безопасность, законность и правопорядок в III тысячелетии: сборник материалов Международной научно-практической конференции (Воронеж, 27 июня 2013 г.)». - Воронеж: Изд-во Воронеж.ин-та МВД России, 2013, Ч. 1, ст. 286-289.

միայն այն անձի նկատմամբ, որի մեղքը թեկուզ ոչ բացահայտորեն, բայց ճանաչվում է կոնկրետ հանցագործությունը կատարելու մեջ: Անչափահասի նկատմամբ քրեական գործը կարճելու մասին որոշման տեքստում պարտադիր առկա է այն փաստի հաստատումը, որ նա է կատարել համապատասխան հանցագործությունը: Իսկ դա ինքնըստինքյան ոչ այլ ինչ է, քան անչափահասի խարանումը որպես հանցագործություն կատարած անձ: Ցավոք, ստեղծվում է իրավիճակ, երբ փաստացի խախտվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը, որի համաձայն՝ անձը ճանաչվում է մեղավոր ոչ այլ կերպ, քան դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Այս առումով պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծն առաջին անգամ առաջընթաց արձանագրեց, քանի որ նախատեսում է այնպիսի դա-

տական ընթացակարգ, որը չի կարող բացասաբար ազդել անչափահասի անհատականության վրա: Ըստ նախագծի՝ հսկող դատախազը քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և հարուցում է անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն, որը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է դատարանին: Ինչպես տեսնում ենք անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցն իր վերջնական լուծումը ստանում է դատարանում և սա պետք է համարել արմատական բարեփոխում: Ուստի պետք է խոստովանել, որ նշված կարգավորումը մեր քրեադատավարական օրենսդրության համար լավագույնն է, որը հնարավոր բացասական հետևանքները հասցնում է նվազագույնի:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ՊՆ ՌԱՎ ռազմատեխնիկական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի «Քաղաքացիական իրավունք» ամբիոնի հայրորդ

ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ՝ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 14-րդ գլուխը, որը վերնագրված է «Բնակելի տարածության սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ», պարունակում է «Բնակելի տարածության օգտագործման իրավունքը» վերտառությամբ 225-րդ հոդվածը, որով կանոնակարգվում են բնակելի տարածության օգտագործման իրավունքի հարցերը՝ մասնավորապես, դրա ծագման հիմքերը, կարգը, սուբյեկտները, դադարման կարգը:

Համաձայն վերոնշյալ հոդվածի 1-ին կետի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքն ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է, որն անձի հետ անխզելիորեն կապված իրավունք է, որը չի կարող օտարվել, լինել գրավի, վարձակալության կամ անհատույց օգտագործման ինքնուրույն առարկա, ինչպես նաև չի կարող փոխանցվել այլ անձի ժառանգաբար կամ իրավահաջորդության կարգով:

Ցանկացած իրավունքի, այդ թվում՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի բովանդակությունն է կազմում վերջինս ձևավորող իրավասությունների համակցությունը: Բնակելի տարածության օգտագործման իրավունքի բովանդակությունը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, համաձայն որի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով, և անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքի բովանդակությունը սահմանափակվում է

բացառապես սեփականատիրոջ հետ համահավասար դրանում ապրելու միջոցով բնակելի տարածության օգտագործմամբ: Վերոնշյալ օրենսդրական նորմից բխում է, որ առաջին՝ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցողները տիրապետում են (առանց տիրապետման, անխոս, համատեղ բնակության իրավունքն իրականացնել հնարավոր չէ) և օգտագործում են բնակելի տարածությունը սեփականատիրոջ հետ համահավասար և իրավունք ունեն յուրաքանչյուրից՝ ներառյալ սեփականատիրոջից, պահանջելու վերացնել բնակելի տարածության նկատմամբ իրենց իրավունքների ցանկացած խախտում: Նրանք իրավունք ունեն օգտագործելու բնակելի տարածությունն իրենց բնակության համար, և եթե այլ բան նախատեսված չէ սեփականատիրոջ հետ համաձայնագրով, վերջիններս իրավունք ունեն օգտվելու ոչ թե բնակելի տարածության որոշակի հատվածից, այլ ամբողջ բնակելի տարածությունից: Բացի այդ, բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցողներն իրավասու են բնակելի տարածությունն օգտագործել ի շահ իրենց և իրենց հայեցողությամբ: Երկրորդ, բնակելի տարածության սեփականատերն իրավունք չունի միակողմ, առանց բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձանց համաձայնության սահմանափակել վերջիններիս օգտագործման իրավունքը համապատասխան բնակելի տարածության նկատմամբ: Նշվածի առնչությամբ ընդունելի չէ Ի. Չերկաշինայի մոտեցումը, ըստ որի՝ «օգտագործման կարգի վերաբերյալ այլ համաձայնությունը դիտվում է որպես սեփական բնակարանը մշտական հիմունքներով բնակվելու համար հատկացնելու մերժում»¹:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

¹ Ст'ю Черкашина И. Л., “Судебная защита права пользования жильём помещением, Российская юстиция”. 2004. № 6. ст. 20-23.

Բացի այդ, ոչինչ բնակելի տարածության սեփականատիրոջը չի սահմանափակում (իր համաձայնության դեպքում, իհարկե) բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձանց օժտելու իրավասությունների ավելի ընդարձակ շրջանակով այն բնակելի տարածության նկատմամբ, որտեղ բնակվում են համատեղ:

Հարկ ենք համարում նշել, որ կանոնակարգելով քաղաքացիների բնակարանային պահանջունքների բավարարմանն ուղղված այնպիսի կարևորագույն ինստիտուտ, ինչպիսին բնակելի տարածության օգտագործման իրավունքն է, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը, չնայած նախկինում կատարված փոփոխություններին, մինչ օրս էլ հակասություններ է պարունակում ոչ միայն քաղաքացիական օրենսգրքի այլ նորմերի հետ, այլև հոդվածի առանձին մասերն էլ հակասում են միմյանց:

Այսպես, 225-րդ հոդվածի 1-ին մասն անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքը բնութագրում է որպես բնակելի տարածությունում բնակվելու իրավունք: Նույն մասի երկրորդ պարբերությունը սահմանում է, որ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձի հետ առանց սեփականատիրոջ համաձայնության կարող են բնակվել նաև իր ընտանիքի անդամները (ամուսինը, անչափահաս երեխաները): Նշանակում է, ելնելով հոդվածի առաջին մասից, կարելի է ասել, որ եթե անձը ձեռք է բերում բնակելի տարածության օգտագործման իրավունք, նրա հետ միաժամանակ այդպիսի իրավունք ձեռք են բերում նաև նրա ընտանիքի անդամները՝ անկախ սեփականատիրոջ համաձայնությունից²:

Սակայն նույն հոդվածի երկրորդ մասը որպես բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագման միակ հիմք նշում է սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագիրը՝ սահմանելով, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրա-

վունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից: Մինչդեռ, հոդվածն անտեսում է այն հանգամանքը, որ հենց նույն հոդվածի 1-ին մասով արդեն նախատեսել է օրենքով դրա ծագումն ազգակցական կապի հիման վրա: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1213-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված է կտակային հանձնարարականի առանձին տեսակ՝ բնակելի տան կամ դրա մասի տրամադրումը ցմահ օգտագործման իրավունքով (այն, ըստ էության նույնն է, ինչ 225-րդ հոդվածով նախատեսված բնակելի տարածության օգտագործման իրավունքը), որի դեպքում բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումն օրենքը չի պայմանավորում դրա գրանցմամբ:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը, մեր կարծիքով, շարունակում է խնդրահարույց մնալ հատկապես բնակելի տարածության սեփականատիրոջ ընտանիքի անդամների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրացման տեսանկյունից, քանզի այն (225-րդ հոդվածը) չի արտացոլում սեփականատիրոջ ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրացման առանձնահատկությունները: Ուստի, սույն ուսումնասիրության շրջանակներում հանգամանալից կանդրադառնանք բնակելի տարածության սեփականատիրոջ ընտանիքի անդամների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի հիմնախնդիրներին:

Սեփականատիրոջ ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքը կամ ինչպես այն մասնագիտական գրականությունում այլ կերպ անվանվում է համատեղ բնակության իրավունքն իրենից ներկայացնում է մի ինստիտուտ, որը ծագել է խորհրդային իրավունքում, հանդիսանում է խորհրդային իրավակարգի ծնունդ և արտասահմանյան երկրներում գրեթե նմանօրինակը չունի³: Օրենսդիրը, հատուկ առանձնացնելով բնակարանային իրավահարաբերությունների

² Նույնաբովանդակ դրույթ պարունակում է նաև Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի՝ «Բնակելի տարածության օգտագործման իրավունք» վերտառությամբ հոդված 1203-ի 2-րդ մասը, Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 632-րդ հոդվածը, Մոլդովայի քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետը:

³ St'u Качалова И. В., «Право совместного проживания (жилищные права членов семьи собственника, нанимателя и члена жилищного кооператива) // Право и политика». № 12. - М.: 2005, ст. 136.

սուբյեկտներին՝ ընտանիքի անդամներին, վերջիններիս վերապահել է նաև առանձնահատուկ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունք՝ այն անվանելով բնակելի տարածության օգտագործման իրավունք:

Անդրադառնալով սեփականատիրոջ ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրավական բնույթի հարցին՝ նշենք, որ իրավաբանական գրականությունում նշված իրավունքն իր առաջացման պահից քաղաքացիագետների մեծամասնության կողմից բնութագրվել է որպես իրային իրավունք⁴, չնայած կարելի է հանդիպել նաև հակառակ տեսակետների⁵:

Ինչպես արդեն նշել ենք, բնակելի տարածության օգտագործման իրավունքի, այդ թվում՝ բնակելի տարածության սեփականատիրոջ ընտանիքի անդամների, հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով, որի 2-րդ կետն ուղղակիորեն սահմանում է, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ 225-րդ հոդվածով սեփականատերը պարտավորեցված չէ կնքելու պայմանագիր բնակելի տարածության օգտագործման հավակնող որևէ մեկի, այդ թվում նաև ընտանիքի անդամների հետ, ինչը պայմանագրի կնքումը դարձնում է անիրագործելի: Փաստորեն, նշված հոդվածը, անտեսելով քննարկվող իրավունքի առաջացման այնպիսի հիմք, ինչպիսին օրենքն է, բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագման միակ հիմք է դիտում պայմանագիրը: Սակայն, մեր իրականությունում, հաշվի առնելով նաև ազգային մտածելակերպի առանձնահատկությունները, դժվար է պատկե-

րացնել, որ օրինակ՝ բնակարանի միակ սեփականատեր հանդիսացող հոր հետ բնակելի տարածության օգտագործման պայմանագիր կնքեն նրա երեխաները, կինը կամ ծնողները: Նման անիրաժեշտություն ընտանիքի անդամները չեն տեսնում, քանի դեռ ընտանիքը հաշտ է, իսկ անհաշտություն առաջանալուց հետո, սեփականատերը, բնականաբար, կխուսափի նման պայմանագիր կնքելուց, ինչն էլ իր հերթին խնդիրներ կհարուցի (և իրականում հարուցում է) ընտանիքի անդամների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրացման առնչությամբ:

Արդյունքում, այդպիսի իրավակարգավորման պայմաններում, 225-րդ հոդվածը հակասություններ է բովանդակում հենց բնակելի տարածության սեփականատիրոջ անչափահաս երեխաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագման, իրականացման և դադարման համար միակ հիմք դիտելով սեփականատիրոջ հետ կնքված պայմանագիրը, օրենքը փակուղի է մտցնում այն անչափահասների իրավունքների պաշտպանության հարցը, որոնց օրինական ներկայացուցիչները միաժամանակ հանդիսանում են տվյալ բնակելի տարածության սեփականատերեր: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարք կնքել անձամբ իր նկատմամբ: Այստեղից հետևում է, որ օրինական ներկայացուցիչը բնակելի տարածության օգտագործման իրավունք առաջացնող պայմանագիր չի կարող կնքել անչափահասի հետ, որի հետևանքով անչափահասի բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքի առաջացումը դառնում է անհնար: Արդյունքում պրակտիկայում առաջանում են վեճեր, երբ անչափահասի ծնողներ-

⁴ Տե՛ս Суханов Е. А., “Общие положения о праве собственности и других вещных правах. Хозяйство и право”, 1995, № 6, ст. 45, Щенникова Л. В., “Вещное право: Учебное пособие”. Пермь: Изд-во Пермского университета, 2001, ст. 143, Скловский К. И., “Собственность в гражданском праве”, М., 2002, ст. 435-436.

⁵ Մ.Ի. Բրագինսկու պնդմամբ՝ «անշուշտ, քաղաքացիական իրավահարաբերությունների մեծամասնությունը հանդիսանում է խառը «իրային-պարտավորական»» (Տե՛ս Брагинский М. И., “К вопросу о соотношении вещных и обязательственных правоотношений // Гражданский кодекс России: проблемы, теория, практика.” М., 2001, ст. 115): Հայտնվել է նաև տեսակետ, համաձայն որի՝ բնակելի տարածության սեփականատիրոջ և նախկին կնոջ միջև առաջանում են իրավահարաբերություններ, որոնք նման են բնակելի տարածության վարձակալության իրավահարաբերություններին (Տե՛ս Гонашвили Г. Л., “Права на жилое помещение при расторжении брака. Законодательство”. - № 2. М., 2002, ст. 43-46):

րից մեկը պահանջում է վտարել մյուս ամուսնուն և երեխաներին: Այս պարագայում անչափահասների իրավունքների պաշտպանության հարցը մնում է չլուծված, քանի որ եթե առաջնորդվում ենք 225-րդ հոդվածի 2-րդ մասով, ապա երեխաներին տվյալ բնակելի տարածությունում բնակվելու հնարավորությունից զրկելու վերաբերյալ տվյալ ծնողի պահանջն օրինաչափ է:

Սակայն, եթե ընդունում ենք, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքը կարող է առաջանալ նաև օրենքի հիման վրա, գոյություն ունենալ անկախ գրանցման հանգամանքից, այս դեպքում անչափահասներին օգնության է հասնում «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, որի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից: Սույն հոդվածում նշված «ապրելու իրավունքը» ըստ էության բնակվելու իրավունքն է, այսինքն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը: Այստեղից հետևում է, որ անչափահասի օրինական ներկայացուցիչ՝ ծնողի բնակելի տարածության սեփականատեր հանդիսանալու դեպքում նրա անչափահաս երեխաներն այդ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեն, որը կարող է դադարել այն դեպքում, եթե դադարի ծնողի սեփականության իրավունքը: Մինչդեռ, ՀՀ դատական պրակտիկայում քննարկվող հոդվածն այլ կերպ է մեկնաբանվում՝ նշելով, որ ծնողի հետ ապրելու երեխայի իրավունքն անմիջականորեն կապված է ծնողի անձի հետ, այլ ոչ

թե ծնողի սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող գույքի հետ⁶:

Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորմանը՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 292-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով անչափահասի բնակելի տարածության օգտագործման իրավունքը կարող է դադարել միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ:

Նշենք, որ բնակելի տարածության սեփականատիրոջ զավակների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի խնդիրներն այսքանով չեն սպառվում: Մասնավորապես, եթե, հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները (ծնողի զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքը ծագում է օրենքի ուժով և պահպանվում է մինչև երեխայի 18 տարին լրանալը), անչափահաս երեխաներն ունեն ծնողների հետ ապրելու իրավունք և սեփականատեր ծնողը չի կարող իր անչափահաս երեխային բնակարանից վտարելու պահանջ ներկայացնել, ապա չափահաս երեխաներն այդ առումով դառնում են անպաշտպան, եթե ծնողը չափահաս երեխաների հետ չի կնքում բնակելի տարածության օգտագործման պայմանագիր: Մինչդեռ, օրենքի ուժով ընտանիքի անդամի մոտ օգտագործման իրավունք ծագելու դեպքում, վերջինս կձեռքբազատվեր այդպիսի խնդրի առջև կանգնելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը շարունակում է խնդրահարույց մնալ նաև բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելիս: Այսպես, այն անձինք, ովքեր օգտագործման իրավունք ձեռք են բերել մինչև Քաղաքացիական օրենսգրքի

ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

⁶ Տե՛ս Նիկողոս Դաբադյանն ընդդեմ Մարի, Նշան և Տաթևիկ Դաբադյանների՝ բնակելի տնից վտարելու պահանջի մասին ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը, քաղաքացիական գործ թիվ 3-222(ՎԴ): Տե՛ս նաև Ավարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանի հայցն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 1995 թվականի հունվարի 31-ի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վտարելու պահանջների մասին ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, քաղաքացիական գործ թիվ ԿԴ03/0026/02/08, Նարինե Աբրահամյանի հայցն ընդդեմ Արտակ Խաչատրյանի, Սեդիկ Փուրթյանի՝ երեխայի բնակելի տարածության օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջի մասին ՀՀ Վճռաբեկ դատարանի 2006 թվականի հունվարի 27-ի որոշումը, քաղաքացիական գործ թիվ 3-112(ՎԴ)/2006:

ուժի մեջ մտնելը՝ 1999 թվականի հունվարի 1-ը, իրենց իրավունքների ծավալով կարող են որոշակիորեն տարբերվել գործող քաղաքացիական օրենսգրքի գործողության ժամանակ այդպիսի իրավունք ձեռք բերած անձանցից, քանի որ մինչ 1999 թվականը բնակելի տան օգտագործման իրավունքը ձեռք էր բերվում և այդ իրավունքի բովանդակությունը սահմանվում էր Հայաստանի Հանրապետության նախկին բնակարանային օրենսգրքով:

«Նախկին բնակարանային օրենսգրքի 120-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տան սեփականատիրոջ ընտանիքի անդամները, որոնց նա բնակեցրել է իրեն պատկանող տանը, իրավունք ունեն նրա հետ համահավասար օգտվելու տան բնակելի տարածություններից, եթե նրանց բնակեցնելիս այլ վերապահում չի եղել: Բնակելի տարածությունից օգտվելու իրավունքն այդ անձանց համար պահպանվում է բնակելի տան սեփականատիրոջ հետ ընտանեկան հարաբերությունները դադարեցնելու դեպքում:

Սա նշանակում է, որ բնակելի տարածությունից օգտվելու իրավունքը ծագում էր ազգակցական կապի հիման վրա, չէր պահանջում պետական գրանցում, անհատույց էր, ցմահ: Օրենքը չէր նախատեսում այդ իրավունքն առանց իրավատիրոջ համաձայնության դադարեցնելու հնարավորություն: Օգտագործման իրավունք ունեցողի օգտագործման իրավունքի ծավալը հավասար էր սեփականատիրոջ օգտագործման իրավունքի ծավալին:

1999 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքով բնակելի տարածության օգտագործման իրավունքը նորովի սահմանվեց, և եթե բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքին ուժի մեջ մտնելուց հետո, նրա բովանդակությունը տարբերվում էր մինչ այդ ծագած բնակելի տան օգտագործման իրավունքից:

1999 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ օգտագործման իրավունքի բովանդակության մեջ կատարվեցին որոշակի փոփոխություններ. բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում էր այդ իրավունքի գրանցված լինելու պարագայում: Հնարավոր էր իրավուն-

քը սեփականատիրոջ պահանջով դադարեցնել առանց իրավատիրոջ համաձայնության՝ դատական կարգով, սեփականատիրոջ կողմից շուկայական գնով փոխհատուցելու միջոցով:

2005 թվականի հոկտեմբերի 4-ին օրենսդրական համապատասխան փոփոխությունների արդյունքում այս իրավունքի բովանդակությունը կրկին փոփոխման ենթարկվեց: «Քաղաքացիական օրենսգրքում այդ ժամանակ կատարված փոփոխության արդյունքում բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագման պարտադիր պայման դարձավ պետական գրանցումը, իրավունքը կարող էր դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով: Սահմանվեց փոխհատուցման հաշվարկման կարգը, մասնավորապես՝ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում էր իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետևյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց և սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից և ոչ ավելի 9 քառակուսի մետրից:

Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար և տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

Ստացվում է, որ եթե անձը մինչև 1999 թվականի հունվարի 1-ը սահմանված կարգով հաշվառված (գրանցված) է եղել բնակելի տարածությունում և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահը մշտապես կամ առավելապես բնակվել է այդ բնակարանում, ապա մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմում ներկայացնելու դեպքում փոխհատուցումը կատարվում է նշված կարգով:

Եթե սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմումը ներկայացվում է դատարան 2007 թվակա-

նի հունվարի 1-ից հետո, ապա սույն կետով սահմանված պաշտպանությունից օգտվում են միայն այն անձինք, որոնց բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը գրանցված է սահմանված կարգով: Այդպիսի դիրքորոշումն իր արտահատությունն է գտել նաև դատական պրակտիկայում⁷:

Փաստորեն, պետությունը 1998 թվականի քաղաքացիական օրենսգրքի ընդունմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունքի բովանդակության սահմանները նեղացրեց. մինչ այդ անօտարելի իրավունքը հնարավոր դարձրեց օտարել՝ շուկայական արժեքի չափով փոխհատուցում տրամադրելու միջոցով: Արդյոք բնակելի տարածության իրավունքի դադարեցման նման կարգավորումը կիրառելի էր մինչև օրենսգրքի ընդունումն օրենքի ուժով օգտագործման իրավունք ձեռք բերած անձանց նկատմամբ: Գտնում ենք, որ ոչ, քանի որ քաղաքացիական իրավահարաբերությունը սեփականատիրոջ և օգտագործման իրավունք ունեցող անձի միջև ծագել էր մինչև 1999 թվականի հունվարի 1-ը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգիրքը կիրառվում է քաղաքացիական այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են օրենսգիրքը գործողության մեջ դրվելուց հետո՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Իսկ օրենքը 225-րդ հոդվածի վերաբերյալ այս կա-

պակցությամբ որևէ դրույթ չի պարունակում, ուստի, մեր կարծիքով, մինչև 1999 թվականը ծագած բնակելի տարածության օգտագործման իրավունքը չէր կարող հարկադրաբար դադարեցվել:

Ինչևէ, դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն որդեգրել է այլ դիրքորոշում և մինչև 1999 թվականը ծագած իրավունքները դադարեցվում էին սեփականատիրոջ պահանջով, սեփականատիրոջ կողմից շուկայական գնով փոխհատուցելու միջոցով: Հարկ է նշել, որ օգտագործման իրավունք ունեցող անձանց տրվելիք հատուցումը հաշվարկվում էր բնակարանի շուկայական արժեքը բոլոր սեփականատերերի և բոլոր օգտագործողների թվին հավասարապես բաժանելու միջոցով: Այսինքն, բնակելի տարածության սեփականատերերի և օգտագործողների իրավունքները գնահատվում էին հավասար⁸:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածը գույքի օգտագործման իրավունքը դասում է գույքային իրավունքների թվին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝ գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարելի գրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններ-

⁷ Տե՛ս Ժուլետա Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2013 թվականի հուլիսի 11-ի որոշման դեմ՝ ըստ Ժուլետա Հարությունյանի, Կամո, Ծաղիկ, Արաիկ Ղազարյանների ընդդեմ Երազիկ Հարությունյանի՝ ապօրինի տիրապետողին տնից վտարելու պահանջի մասին, ինչպես նաև Երազիկ Հարությունյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ժուլետա Հարությունյանի, Կամո, Ծաղիկ, Արաիկ Ղազարյանների՝ բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջի մասին ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 8-ի որոշումը, քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0023/02/11:

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2001 թվականի հունիսի 1-ի որոշումն ըստ հայցի Հ. Սարգսյանի ընդդեմ Գ. Սարգսյանի թիվ 3-416(ՎԴ)-2001թ-ի գործով, Վճռաբեկ դատարանի 2002 թվականի հուլիսի 12-ի որոշումն ըստ հայցի Վ. Հարությունյանի ընդդեմ Նախշուն և Արսեն Խոջոյանների թիվ 3-719(ՎԴ)-2002թ. գործով, Վճռաբեկ դատարանի 2004 թվականի ապրիլի 4-ի որոշումն ըստ հայցի Ս. Հակոբյանի ընդդեմ Ս. Հակոբյանի և Գ. Կիրակոսյանի թիվ 3-567(ՎԴ)-2004թ. գործով, Վերաքննիչ դատարանի 2001 թվականի մարտի 21-ի վճիռն ըստ հայցի Ս. Սահակյանի ընդդեմ Մ. Բաղայանի և Ա. Սահակյանի թիվ 01-18-ի գործով, Վերաքննիչ դատարանի 2002 թվականի նոյեմբերի 11-ի վճիռն ըստ հայցի Վ. Գրիգորյանի ընդդեմ Հ. Սահակյանի թիվ 02-1409 գործով, Վերաքննիչ դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռն ըստ հայցի Մ. Էլբակյանի ընդդեմ Կ. Հակոբյանի, Ն. Հովհաննիսյանի, Ս. Մուրադյանի, Դ. Աֆյանի թիվ 05-2454 գործով, Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005 թվականի նոյեմբերի 23-ի վճիռն ըստ հայցի Մ. Ղազարյանի ընդդեմ Ն. Ռոստոմյանի թիվ 2-1057-2005 թվականի գործով:

րով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Վերը նշված վերլուծությունից բխում է, որ նշված բնակարանային օրենսգրքի հիման վրա ծագած իրավունքը գոյություն ունեցող իրային իրավունք է, գույք է, ուստի օգտվում է Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված երաշխիքներից:

Մինչդեռ, 2005 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված օրենքի արդյունքում 2007 թվականից հետո այդ իրավունքը դադարում է իրենից որևէ նյութական արժեք ներկայացնելուց, «նյութական» իրավունք լինելուց, քանի որ հնարավորություն է տրվում սեփականատիրոջն իր հայեցողությամբ առանց փոխհատուցում տալու դադարեցնելու չգրանցված բնակելի տարածության օգտագործման իրավունքը: Ստացվում է, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքն այս օրենսդրական փոփոխությունների արդյունքում դադարում է գույքային իրավունք լինելուց: Փաստորեն, պետությունը, ընդունելով 225-րդ հոդվածի փոփոխությունները, դրանով իսկ զրկել է օգտագործողներին իրենց գույքից:

Սույն վերլուծությունը վկայում է, որ սեփականատիրոջ ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքը սահմանված է որպես իրային իրավունք: Այդ միտումը ձևավորվել է դեռևս խորհրդային բնակարանային իրավունքում, բնակելի տարածության սեփականատիրոջ ընտանիքի անդամների իրավունքներն այնպես ընդլայնելով, որ դրանք փաստացի կորցրել են իրենց պարտավորական բնույթը և ձեռք են բերել այլ անձի իրի նկատմամբ իրավունքի գծեր⁹:

Արդյունքում, բնակելի տարածության օգտագործման իրավունքը կամ բնակվելու իրավունքը ձեռք է բերում ինքնուրույն բնույթ: Սուբյեկտի մոտ կոնկրետ բնակելի տարածության հետ իրավական կապ, դրա նկատմամբ որոշակի հնարավորություններ են ստեղծվում: Ճիշտ է, այդ հնարավորությունները սահմանափակ են: Նա կարող է միայն օգտագործել այդ բնակելի տարածությունը: Նշված հատկանիշներն ակնհայտորեն վկայում են այս իրավունքի իրային-իրավական բնույթի մասին¹⁰:

Վերոնշյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքն ընտանիքի անդամների մոտ պետք է առաջանա ոչ թե սեփականատիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա, այլ օրենքի ուժով հիմնված է բնակելի տարածության սեփականատիրոջ հետ բացառապես վստահության վրա հիմնված ընտանեկան կապերի վրա: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը չի արտացոլում սեփականատիրոջ ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրավական բնույթը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածում որպես բնակելի տարածության օգտագործման իրավունքի առաջացման հիմք, սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրից բացի, նախատեսել նաև օրենքը՝ միաժամանակ սահմանելով, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքը սեփականատիրոջ ընտանիքի անդամների համար ծագում է անկախ սեփականատիրոջ հետ պայմանագրի կնքումից և իրավունքի պետական գրանցումից:



⁹ Ст'ю Скловский К. И., “Применение гражданского законодательства о собственности и владении. Практические вопросы”. М., 2004, ст. 170.

¹⁰ Ст'ю Щенникова Л. В., “Вещное право: Учебное пособие”. Пермь, изд-во Пермского университета, 2001, ст. 90.

ՎԱՐԴԱՆ ՍԱԽԿԱԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Իրավունքի սոցիալական նշանակության հասկացության և էության բացահայտումն անհնար է, քանի դեռ չի բացահայտվել նրա էական, հիմնային և ելակետային հատկանիշները, որոնց շնորհիվ այն տարբերվում է մյուս նորմատիվ կարգավորիչներից:

Իրավունքի առավել էական հատկանիշներին դասվում են՝ 1) պետական-կամային բնույթը, 2) նորմատիվությունը, 3) իշխանական բնույթը, 4) ձևական որոշակիությունը: Իր հերթին իրավունքի հասկացության գլխավոր բաղադրիչներ ներկայացնող այդ հատկանիշներից յուրաքանչյուրի բովանդակությունը տարբերակվում է համալիր, բազմամակարդակ բնույթով, բարդ կառուցվածքով, ինչը ձևավորվում է իրավունքի տվյալ հիմնական հատկանիշը բացահայտող և կոնկրետացնող մի շարք առանձնահատուկ գծերից և հատկություններից:

Իրավունքի պետական-կամային բնույթը կայանում է նրանում, որ իրավունքն արտահայտում է հասարակության պետական կամքը, որը պայմանավորված է վերջինիս տնտեսական, մշակութային, ազգային, կրոնական, ժողովրդագրական և այլ պայմաններով:

Իրավունքն անիմաստ է մարդկանց գիտակցված, կամային գործունեությունից դուրս: Իրավունքը միշտ հանդիսանում է կամք, սակայն ցանկացած կամք իրավունք չէ: Այսպես, իրավունք չի հանդիսանում առանձին անհատի, այս կամ այն սոցիալական խմբերի, շերտերի, դասերի կամքը: Ինքնին իրավունք չի դառնում նաև քաղաքական կուսակցությունների և հասարակական միավորումների փաստաթղթերում արտահայտված կամքը:

Իրավունքի գիտակցական-կամային բնույթն արտահայտվում է նրանում, որ այն մարդկային գիտակցության միջոցով արտացոլում է այդ պահանջմունքները, շահերը և հասարակական

օրինաչափությունները: Այդպիսով, իրավունքը գիտակցված նորմերի ամբողջություն է: Այն նաև մարդկանց կամքի դրսևորումն է, քանի որ դրանում սահմանվում է նրանց ապագա վարքագիծը, իրավունքի միջոցով կենսագործվում են սուբյեկտիվ շահերը, պահանջմունքները, նպատակները¹:

Իրավունքը հասարակության պետական կամքն է², և ոչ թե կառավարող դասի, այլ հատկապես հասարակության: Պետական կամքի նորմատիվային հասկացության նման մեկնաբանությունում նորը բխում է համամարդկային տեսանկյունից, իրավունքի իմացության անհրաժեշտության ընդունումից, դրա հասկացության բացահայտումից վերջինիս ընդհանուր, սոցիալական և դասային հիմքերի համակցման հաշվառմամբ:

Իրականում, պետությունով «անցնում», կամ որ նույն բանն է, «օրենքի կարգավիճակ է ստանում», բոլոր մարդկանց համար պարտադիր է դառնում ոչ միայն իշխանական դասի, այլ նաև տվյալ հասարակության դասերի, շերտերի և այլ սոցիալական ձևավորումների շահերը և հավակնությունները արտահայտող կամքը: Ձգտելով առկա հակասությունների նվազեցման և հաղթահարմանը, տարբեր սոցիալական շերտերի միջև փոխզիջմանը՝ պետությունը հաշվի է առնում, շտկում և ընդհանրացնում հասարակության բարդ և հակասական կամքը՝ տալով դրան նոր հատկություններ և համընդհանուր արտահայտում այն պետական կամային արտահայտման ձևով: Կամքի այլ տարատեսակներից պետական կամքը տարբերվում է առաջինը, նրանով, որ դրանում կենտրոնացվում են բնակչության տարբեր դասերի և խմբերի տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ հետաքրքրությունները և հավակնությունները, երկրորդը, այն, լինելով

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 90 2015

¹ Տե՛ս Վաղարշյան Արթուր, «Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն»: Երևան, 2011, էջ 19:

² Տե՛ս Дробышевский С. А., “Политическая организация общества и право как явления социальной эволюции”. М., 2015, с. 15-16.

անկախ առանձին անձանց և միավորումների կամքից, պարտադիր է ամբողջ հասարակության համար, երրորդը, այն արտահայտվում է պետությունից բխող և դրա կողմից պահպանվող ընդհանուր պարտադիր դրույթներում, վարքագծի կանոններում, որոնք անվանվում են իրավական կամ իրավաբանական նորմեր, հանդիսանում են մարդկանց միջև հարաբերությունների տարատեսակ իշխանական-պաշտոնական կարգավորիչներ:

Հատկապես հասարակության նման պետական կամքը, որը մարմնավորված է իրավական նորմերում, հանդիսանում է հենց իրավունքը:

Իրավունքի էությունը և բովանդակությունը սահմանվում է ոչ միայն տվյալ հասարակության տնտեսական կառուցվածքով, այլ նաև քաղաքականությամբ, բարոյականությամբ, իրավագիտակցությամբ, գիտությամբ, մշակութային, կրոնով և սոցիալական կյանքի այլ բոլոր իրականություններով, որոնք ձեռք են բերվել քաղաքակրթության մակարդակով:

Հատուկ ուշադրության է արժանի այնպիսի համամարդկային գործոնը, որը արդեն մի քանի հարյուրամյակ ունի հզոր ազդեցություն իրավունքի ձևավորման և զարգացման վրա, ինչպես մարդու բնական, ի ծնե, անօտարելի իրավունքի վերաբերյալ ուսմունքն է, որը պետք է ընկած լինի տվյալ պետությունում գործող պոզիտիվ, պաշտոնական իրավունքի հիմքում: Միայն այս դեպքում, համաձայն բնական-իրավական ուսմունքի (Հ. Գրոցիոս, Բ. Սպինոզա, Թ. Հոբբս, Զ. Լոկ, Ս. Պուֆենդորֆ, Ֆ. Վոլտեր, Շ. Մոնտեսքյո, Ժ-Ժ. Ռուսո, Ա.Ն. Ռադիշև և ուրիշներ), վերջինս ընդունվում է մարդկային գիտակցությանը, բնույթին համապատասխանող, և այդ իսկ պատճառով որպես մարդասիրական և արդարացի:

Կանտից հետո, երբ բնական-իրավական տեսության կողմից հռչակված օրենքները, որոնք սինթեզում են իրավագիտակցության և բարոյականության սկզբունքների և գաղափարների վերաբերյալ համամարդկային պատկերացումները, առաջին անգամ ստացան պետական կամքի որակով արտահայտում ֆրանսիական հեղափոխության հիասքանչ փաստաթղթերից մեկում՝ Մարդու և քաղաքացու ա-

զատությունների հռչակագրում (1789 թվական), դրանք անցան բարդ և երկար ճանապարհ, որը նշանավորվեց Միավորված Ազգերի Կազմակերպությունում Մարդու իրավունքների հանդիսանուր հռչակագրի (1948 թվական) միջազգային-իրավական ընդունմամբ և անձի իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային և ներպետական փաստաթղթերում դրանց հետագա զարգացմամբ³:

Այս կամ այն պետության իրավունքը մարդու և քաղաքացու բնածին, հիմնարար իրավունքների և ազատությունների ընդունման և պաշտպանության գաղափարներին համապատասխանում է կամ չի համապատասխանում հարցը՝ դարձավ տվյալ պետության և իրավունքի դեմոկրատական կամ ամբողջատիրական բնույթի սահմանման միջազգային ընդունված չափորոշիչ:

Խորհրդային անցյալում տասնամյակների ընթացքում բնական-իրավական տեսությունը մյուսներին, այսպես կոչված «գաղափարական, բուրժուական» ուսմունքներին զուգահեռ երկար ժամանակ դոգմատիկ դիտարկվում էր որպես պաշտոնական գաղափարախոսության հետ անհամատեղելի և իրավագիտությունում գերակայում էր բնական և պոզիտիվ իրավունքների անհիմն հակադրումը:

Բնական-իրավական տեսության գաղափարների ազդեցությունը ժամանակակից ազգային իրավունքի զարգացման վրա ստացավ պաշտոնական ընդունում և արտահայտում ՀՀ Սահմանադրությունում:

Դրա հետ անմիջականորեն կապված է ազգային իրավունքի բարոյական հիմքերի խորացման, ժողովրդավարական հասարակության իրավունքի և բարոյականության մերձեցման, դրանց միջև ծագող հակասությունների հնարավոր հաղթահարման ներկայիս գործընթացը: Համապատասխանաբար նոր երևույթներից մեկը, որը բնութագրում է իրավունքին նորմատիվային մոտեցումը, կայանում է իրավունքի բնական դպրոցի գաղափարներից նախկինում գոյություն ունեցող հեռացման լիարժեք հաղթահարման ձգտման մեջ, վերջինս ապահովում է բնական և պոզիտիվ իրավունքի միասնությունը տեսությունում և գործնականում:

³ Մանրամասն տե՛ս Ковалев А. А., “Международная защита прав человека”. М., 2013, с. 62-146.

Այսպիսով, նրանում, որ իրավունքը՝ հասարակության պետական կամքն է իր զարգացման տվյալ փուլում, որը պայմանավորված է իր գոյության տնտեսական, քաղաքական, հոգևոր և այլ պայմաններով, կայանում է իրավունքի համամարդկային և դասակարգային էությունը: Դրա անմիջական արտահայտում հանդիսանում է իրավունքի պետական-կամային բնույթի արտահայտումը: Իրավունքի այդ հատկանիշի վերլուծությունը անքակտելի կապված է դրա կարևոր այլ հատկանիշի՝ նորմատիվության դիտարկման հետ:

Իրավունքի նորմատիվային բնույթը կայանում է նրանում, որ իրավունքը որպես հասարակության պետական կամք արտահայտում է տվյալ պետությունում պաշտոնապես ընդունվող և գործող իրավական նորմաների համակարգն իրենց նյութական հասկացությունում:

Իրավագիտությունում նորմերի այդ համակարգն ընդունված է անվանել իրավունք օբյեկտիվ իմաստով, նկատի ունենալով, որ այն, հանդիսանալով հասարակության պետական կամքը, կախված չէ առանձին անհատների կամքից և հարմարեցված չէ որևէ կոնկրետ սուբյեկտի: Դրանով իսկ օբյեկտիվ իրավունքը (նորմերի համակարգը) տարբերվում է իրավունքից սուբյեկտիվային իմաստով (սուբյեկտիվ իրավունք) որպես իրավահարաբերության այս կամ այն մասնակցի (սուբյեկտի) իրավունք (լիազորություններ):

Իրավունքի նորմատիվային հատկանիշը հնարավորություն է տալիս բացատրել իրավունքի էության, բովանդակության և ձևի հարաբերակցությունը:

Դա բարդ, տարբեր հեղինակների, այսինքն իրավունքի նորմատիվային հասկացության համախոհների կողմից տարբեր կերպ մեկնաբանվող հարց է: Հեղինակներից ոմանք միահյուսում են իրավունքի բովանդակությունը դրա էության, մյուսները՝ դրա ձևի հետ⁴:

Այս հարցի ճիշտ լուծում կարելի է գտնել՝ դիտարկելով վերջինիս պետական-կամային և նորմատիվային հատկանիշների տեսանկյունից: Եթե իրավունքի էությունը, այսինքն տվյալ երևույթում գլխավորը, կայունը, օրինաչափը

կայանում է նրանում, որ այն հանդիսանում է հասարակության պետական կամքը, ապա դրա բովանդակությունը կազմում է այդ կամքի նորմատիվային արտահայտումը՝ պետությունից բխող ընդհանուր պարտադիր դրույթների, վարքագծի կանոնների համակարգ, որոնք իրենցից ներկայացնում են սոցիալական նորմաների առանձնահատուկ տարբերակ: Այլ կերպ, քան իշխանության կողմից ընդհանուր պարտադիր նորմերի հրապարակման կամ սանկցիավորման ուղիով, անհնարին է վերածել հասարակական կամքը օրենքի, արտահայտել այն որպես պետական: Դրանով իսկ իրավունքի բովանդակությունը հսկում է տվյալ հասարակության իրավունքի էությունը այն կազմող իրավական նորմաների ամբողջ բազմաձևությունում⁵:

Առանձին վերցված նորմն ելակետային կառուցվածքային տարր է, առաջնային բջջային իրավունքը:

Իրավունքի նորմերը տարբերվում են այլ սոցիալական նորմերից (սովորույթներ, բարոյականության, հասարակական միավորումների նորմաներ և այլն) միայն իրեն բնորոշ առանձնահատկություններով, մասնավորապես, պետության հետ կապ, պետական հարկադրանքով խախտումներից պաշտպանություն, ընդհանուր պարտադիրություն, պաշտոնական որոշակիություն, ինստիտուցիոնալություն, հասարակական հարաբերությունների պաշտոնական կարգավորիչի որակ:

Պետության հետ իրավունքի նորմերի կապը կայանում է նրանում, որ դրանք ի տարբերություն այլ սոցիալական նորմերի, հրատարակվում կամ սանկցիավորվում են պետության կողմից, և պահպանվում ոչ միայն դաստիարակությամբ և համոզմամբ, որը բնորոշ է նաև այլ սոցիալական նորմերին, այլ նաև, երբ դա անհրաժեշտ է, հարկադրական իրավական սանկցիայի կիրառությամբ:

Իրավագիտությունում, ինչպես հայտնի է, արդարացի քննադատության է արժանացել Վիշինսկու անվան հետ կապված ձևակերպումը, որը իրավունքը հանգեցնում է հարկադրանքի միջոցներին, իսկ դրա բոլոր կիրառություն-

⁴ Տե՛ս Фарбер И. Е., “О сущности права”. Саратов. 1959. ст. 45., Иодде О. С., Шаргородовский М. Д., “Вопросы теории права”. М., 1961. ст. 53-54, 56 և այլն:

⁵ Տե՛ս Захарцев С. И., “Некоторые проблемы теории и философии права”. М., 2014, ст. 45-46.

ները «ապահովվում են պետության հարկադրական ուժով»: Նման արտահայտությունները հստակ չեն, անընդունելի են, քանի որ քաղաքացիների մեծամասնությունը, չնայած երկրում սոցիալ-տնտեսական դժվարություններին ինքնակամ և գիտակցաբար համապատասխանեցնում են իրենց վարքագիծը իրավունքի նորմերին: Սակայն, ի տարբերություն բարոյականության, կորպորատիվ և այլ սոցիալական նորմերին, որոնց կատարման համար հարկադրանքի միջոցներ են հանդիսանում հասարակական ազդեցության տարբեր միջոցները, իրավունքի հետևում միշտ «կանգնած» է պետական համակարգը, որը իրավական նորմերի խախտման ժամանակ ունակ է հարկադրանք կիրառել դրանց պահպանության համար: Հետևաբար, «ոչ թե պետության հարկադրական ուժով իրավունքի ապահովման», այլ որպես իրավական նորմերի իրականացման, խախտումներից պաշտպանության երաշխիքի պետական հարկադրանքի կիրառման հնարավորությունում է կայանում իրավունքի կարևորագույն առանձնահատկություններից մեկը:

Շարադրվածի հետ ուղղակի կապված է իրավունքի այլ կարևորագույն գիծը՝ պարտադիրությունը: Այն պետական ինքնիշխանության հետևանք և արտահայտում է: Իրավական նորմերի բոլոր այլ տարատեսակությունները (բարոյականություն, կորպորատիվություն, կրոնականություն և այլն) պարտադիր են բնակչության այս կամ այն հատվածի համար: Եվ միայն իրավունքը՝ նորմերի համակարգը, պարտադիր է բոլորի համար: Դրանով իսկ իրավունքին տրվում է հասարակության ամբողջ իրավական համակարգի օրինականության և իրավակարգի նորմատիվային հիմքերի դերը:

Իրավունքի այլ անբաժանելի գիծը՝ պաշտոնական սահմանվածությունն է, այսինքն նորմերի ճշտություն, հստակություն, ծավալություն, կայունություն, որին մասնավորապես նպաստում են դրանց այնպիսի ներքին հատկություններ, ինչպես իրավական նորմերի առանձնահատուկ կառուցվածքը և դրանց ար-

տաքին ձևավորման իրավաբանական տեխնիկան:

Իրավունքի առանձնահատուկ կարևոր հատկություն, որը վերջինիս հաղորդում է պաշտոնական ամրագրում, հանդիսանում է վերջինիս ինստիտուցիոնալությունը, այն, ըստ իր նշանակության, կարող է դիտարկվել նաև որպես իրավունքի իր նորմատիվային հատկանիշից բխող ինքնուրույն, տարբերակիչ առանձնահատկություն, որպես ձևական որոշակիություն:

Իրավունքի որոշակիությունը (ինստիտուցիոնալությունը) բնութագրվում է երկու կողմերով: Առաջինը կայանում է նրանում, որ ի տարբերություն բարոյականությունից, իրավագիտակցությունից և հասարակական գիտակցման այլ ձևերից իրավունքը դասում է կառուցվածքի ինստիտուցիոնալ տեսակին: Դրա համակարգը (ներքին կառուցվածքը) իրենից ներկայացնում է իրավական հաստատությունների, ինստիտուցիոնալ ձևավորումների համախումբ, որոնց դասվում է իրավունքի նորմը իրավական ինստիտուտները, իրավունքի ոլորտները (և ենթաոլորտները):

Իրավունքի որոշակիության երկրորդ կողմը կայանում է նրանում, որ այն ձևավորող նորմերը հրատարակվում կամ սանկցիավորվում են պետության կողմից խիստ որոշակի ձևերով, օրինական համակարգերում, որոնցից են հանդիսանում իրավունքի տարբեր աղբյուրները, և ամենից առաջ օրենքները⁶:

Իրավունքի ձևի (աղբյուրի) տակ ընկալվում է հասարակության պետական կամքի արտահայտման որոշակի եղանակները (միջոցները): Ձևը ցույց է տալիս, թե ինչպիսիք են իրավունքի արտաքին արտահայտումները, ինչ ձևով է այն առկա և գործում իրական կյանքում: Ձևի միջոցով տեղի է ունենում պետական կամքին հասանելի և համընդհանուր բնույթի հաղորդում, այդ կամքի պաշտոնական իրականացում: Ձևի միջոցով իրավունքը, կարծես, ստանում է «կյանքի ուղեգիր», ձեռք բերում իրավաբանական ուժ:

Իրավունքի արտահայտման ձևերի ձևավորված տարատեսակությունների աղբյուրներ-

⁶ Ст'ю Кудрявцев В. Н., "Юридические нормы и фактическое поведения" // Сов. государство и право. 1980. № 1. ст. 15, Алексеева С. С., "Право - институциональное социальное образование" // Вопросы теории государства и права. Саратов.. 1983. ст. 7.

րին (իրավունքի աղբյուրներ իրավաբանական իմաստով) դասվում են իրավական ավանդույթը, դատական նախադեպը, նորմատիվային բովանդակությամբ պայմանագրերը, նորմատիվ ակտը: Իրավունքի թվարկված նորմերը պետք է դիտարկվեն համապատասխան իրավական համակարգում իրավունքի այս կամ այն տեսակի գոյության և զարգացման կոնկրետ պայմանների հաշվարկով:

Ազգային իրավունքի արտահայտման հիմնական, առավել տարածված ձև հանդիսանում են նորմատիվ-իրավական ակտերը, որոնց շարքում առաջատար տեղը պատկանում է օրենքին:

Սահմանադրությանը համապատասխան օրենքը՝ խորհրդարանի կողմից ընդունված նորմատիվ ակտն է, որը հրապարակվում է խիստ որոշակի ժողովրդավարական գործընթացի միջոցով առավել կարևոր հասարակական հարաբերությունների կարգավորման համար և օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով: Օրենքների և կանոնակարգային նորմատիվային ակտերին զուգահեռ ազգային իրավունքի արտահայտման ձևեր հանդիսանում են նորմատիվային բովանդակությամբ իրավական ավանդույթները, պայմանագրերը և իրավունքի այլ աղբյուրները: Այսպիսով, իրավական նորմը և օրենքը, ինչպես նաև իրավունքի ցանկացած այլ իրավաբանական աղբյուր, հարաբերակցվում են միմյանց հետ որպես իրավունքի բովանդակություն և ձև:

Իրավունքի բովանդակության և ձևի առանձին դիտարկումը տրամաբանորեն թույլատրելի է միայն գիտական աբստրակցման կարգով, հետազոտության հարմարավետության նպատակներով: Իրականում դրանք, ինչպես ճիշտ նկատում է Ա.Ֆ. Շեբանովը, «միմյանցից զատ գոյություն չունեն, իրավունքի անձև բովանդակությունը նույնքան անիմաստ է, ինչպես նաև դրա բովանդակությունից զուրկ ձևը: Իրավունքի բովանդակությունը առկա է միայն այնքանով, որքանով այն ձևակերպված է, միայն որոշակի ձևի հետ միասնությունում գոյություն ունի տվյալ իրավունքի կոնկրետ բովանդակությունը: Այդ իսկ պատճառով խորապես սխալ կլիներ կարծել, որ իրավունքի ձևը

իրավական բովանդակության պարզագույն թաղանթն է»: Իրականում իրավունքի ձևը՝ դա իրավունքի բովանդակության «գոյության ձև» է, «դրա կազմակերպման, դրան որոշակիության, օբյեկտիվության տրման միջոց»⁷: Հատկապես իրավունքի բովանդակության և ձևի միասնությունից բխում է դրա նորմատիվային ընկալումը:

Իհարկե, չի կարելի հաշվի չառնել, որ ոչ ցանկացած իրավունք, որը դուրս է եկել այս կամ այն պետական գրասենյակից կամ առավել ևս «դարձված օրենք», համարժեք արտահայտում է հասարակության կամքը: Ակնհայտ է, որ իրավունքի համար այդ պարտադիր պահանջին չեն համապատասխանում վարչական ակտերում (օրինակ, կապի, հաղորդակցության ուղիների, քաղաքացիական օդագնացության, մաքսային ծառայությունների, առևտրի և այլ մարմինների) դժբախտաբար հաճախ հանդիպող այսպիսի նորմերը, որոնցում թույլատրվում է քաղաքացիների ազատությունների և իրավունքների, նրանց արժանապատվության, նյութական, բարոյական-մշակույթային հետաքրքրությունների ոտնահարում, գերակայում են նեղ վարչական շահերը:

Դրա հետ կապված իրավունքի տեսությունում հասունացել է իրավունքին որպես հասարակության կամքին Սահմանադրության հիման վրա օրենքներում, կանոնակարգային նորմատիվային ակտերում և այլ իրավաբանական աղբյուրներում պարունակվող առանձին նորմերի համապատասխանության հստակ գիտական չափորոշիչների մշակման անհրաժեշտությունը:

Ինչպես նշում է Վ.Մ. Բարանովը, իրավունքի նորմի արդարացիությունը արտահայտում է «մարդկային առաջընթաց գործունեության զարգացման տեսակը, մակարդակը կամ տարրը արտացոլելու իմացական-գնահատումային կերպարի տեսքով դրա բովանդակության և ձևի պիտանելիության աստիճանը», որը ստուգվում է գործնականով: Դրան ի հակադրություն, փիլիսոփայական և հատուկ-իրավաբանական իմաստներով կեղծ հանդիսանում է, ըստ նրա կարծիքի, եթե իրավական նորմը «օբյեկտիվորեն պարունակում է համազգային,

⁷ Տե՛ս Շեբանов А. Ф., «Форма советского права». М., 1968. ст. 24-25.

համապետական շահերի կարգավորվող գործունեության առաջընթաց-դրական զարգացում»⁸:

Իրավունքին համապատասխանող հանդիսանում են միայն արդարացի նորմերը: Ինչ վերաբերվում է հասարակության պետական կամքին, բնական օրենքներին որպես պոզիտիվ իրավունքի բարոյական հիմքերին (բարոյա-էթնիկ սկզբունքներին) չհամապատասխանող նորմերին, որոնք խախտում են քաղաքացիների ազատությունները և իրավունքները, և դրանով կամ որևէ այլ կերպ հակասում Սահմանադրությանը, ապա դրանք կեղծ նորմեր են, որոնք չպետք է կիրառվեն և օրենքով հաստատված կարգով պետք է ենթարկվեն փոփոխության կամ անվավեր պետք է համարվեն:

Անհրաժեշտ է նշել, որ հասարակության պետական կամքին առանձին նորմերի համապատասխանության գնահատման վերը առաջարկած չափորոշիչները վերաբերվում են միաժամանակ ինչպես իրավունքի բովանդակությանը, այնպես էլ, ձևին:

Շարադրվածից տեսանելի է, որ ազգային իրավունքի բովանդակության և ձևի հստակ տարբերությանը զուգահեռ իրավունքի նորմերի նորմատիվային հատկանիշը ընդգծում է դրանց միասնությունը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, օրինականության և իրավակարգի ամրապնդումը, հասարակության և պետության առջև ծառայած խնդիրների լուծման իրավական ապահովվածության ուղղվածությունը:



⁸ Ст'и Баранов В. М., “Истинность норм советского права. Проблемы теории и практики”. Саратов, 1989, ст. 231, 245.

Արթուր Նազարեթյան

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի «Քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն» ամբիոնի հայցորդ

Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը

Հոդվածը վերաբերում է վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգին: Դրանում վերլուծված են հայրենական և ռուս գիտնական իրավաբանների կարծիքները վճռաբեկ բողոքարկման ինստիտուտի իրականացման հիմքերի մասին, ներկայացված են հեղինակային մի շարք առաջարկներ վճռաբեկ դատարանում գործով վարույթի կասեցման հիմքերն ընդարձակելու և գործի քննությունը հետաձգելու մասին:

Անդրադարձ է կատարվել նաև գործի վճռաբեկ քննության սահմաններին:

Առաջարկ է արվել ընդլայնել վճռաբեկ բողոքի քննության սահմանները, և վճռաբեկ դատարանին իրավունք վերապահել օրինականության շահերից ելնելով՝ դուրս գալ վճռաբեկ բողոքի փաստարկների սահմաններից և գործը քննել ողջ ծավալով:

Բանալի բառեր. վճռաբեկ դատարան, վճռաբեկ բողոք, տնօրինչականության սկզբունք, քաղաքացիական դատավարություն, վարույթի կասեցում, գործի քննության հետաձգում, գործի քննության սահմաններ:

Арту́р Назаре́тян

Соискатель кафедры гражданского права и гражданско-процессуального права Российско-Армянского (Славянский) университета

Порядок рассмотрения дел в кассационном суде

Статья относится к порядку рассмотрения дел в суде кассационной инстанции. В нем проанализированы мнения отечественных и русских ученых юристов об основах осуществления института кассационного обжалования, сделан ряд предложений о расширении основ приостановления производства по делу в суде кассационной инстанции и отложении рассмотрения дела. Сделана ссылка также о пределах рассмотрения дела в кассационной инстанции. Было сделано предложение, расширить пределы рассмотрения кассационной жалобы и кассационному суду предоставить право, исходя из интересов законности, выйти за пределы аргументов кассационной жалобы и дело проверить в полном объеме.

Ключевые слова: кассационный суд, кассационная жалоба, принцип диспозитивности, гражданское судопроизводство, приостановление производства, отложение рассмотрения дела, пределы рассмотрения дела.

Artur Nazaretyan

Post-graduate student at the Russian-Armenian (Slavonic) University

The Order of Examination of Cases in the Court of Cassation

This article refers to the order of examination of cases in the Court of Cassation. Here are analyzed the opinions of native and Russian scientist lawyers about the institute of the cassation appeal, also proposal is provided for on enlarging the grounds of suspending the proceedings and delaying the consideration of the case.

Reference has been also made to the boundaries of the case of the cassation examination. A proposal has been made to extend the boundaries of the cassation appeal, and taking account the interests of legality to entitle the Court of Cassation a right to to get out of the boundaries of the cassation appeal arguments and fully examine the case.

Keywords: Court of Cassation, cassation appeal, the principle of optionality, civil procedure, suspension of proceedings, delaying of the case examination, boundaries of the case examination.

Նելլի Աղաբաբյան

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի «Քրեական դատավարություն և
կրիմինալիստիկա» ամբիոնի ասպիրանտ

**Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով
քրեական գործը կարճելը և քրեական հետապնդումը դադարեցնելը**

Անչափահասությունն անձին բնութագրող այն հատկանիշն է, որը սահմանում է նրա հատուկ կարգավիճակը քրեական դատավարությունում: Այն դրանով օժտված անձին ընձեռում է առանձնահատուկ հնարավորություններ, որոնք արտացոլվում են քրեական գործերի ըստ էության լուծման մեխանիզմում: Համանման մեխանիզմներից է քրեական գործի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումը:

Անչափահասների նկատմամբ գործերի վարույթները պետք է տարբերվեն բոլոր այլ քրեական գործերի վարույթներից հնարավորինս բարենպաստ պայմանների ապահովմամբ, որոնք առավելագույնս կնպաստեն անչափահասների իրավունքների և օրինական շահերի ապահովմանը: Այսինքն պետք է գոյություն ունենա յուրաքանչյուր արդարադատության հատուկ համակարգ, որը կերաշխսավորի արդարացի արդարադատություն անչափահասների նկատմամբ: Նախաքննության փուլում անչափահասի նկատմամբ քրեական գործը կարճելը լիովին համապատասխանում է այդ պահանջին:

Բանալի բառեր. անչափահաս, քրեական գործով վարույթ, քրեական գործը կարճել, քրեական հետապնդումը դադարեցնել, նախնական քննություն:

Нелли Агабабян

аспирант кафедры уголовного
процесса и криминалистики юридического
факультета ЕГУ

**Прекращение уголовного дела по производству преступления, совершенного
несовершеннолетним, и прекращение уголовного преследования**

Несовершеннолетие является той чертой личности, которым определяется его особое положение в уголовном судопроизводстве. Оно дает такому человеку уникальные возможности, которые в частности выражаются в механизмах решения уголовных дел по существу. Аналогичным механизмом является прекращение уголовного дела или прекращение уголовного преследования.

Производство по делам несовершеннолетних должно отличаться от всех других уголовных производств обеспечением, по возможности, благоприятных условий, которые будут максимально содействовать обеспечению прав и законных интересов несовершеннолетних. Это означает, что должна существовать специальная система ювенальной юстиции, гарантирующая правосудие в отношении несовершеннолетних. На этапе предварительного следствия прекращение уголовного дела в отношении несовершеннолетних, полностью соответствует этому требованию.

Ключевые слова: несовершеннолетний, производство по уголовному делу, прекращение уголовного дела, прекращение уголовного преследования, предварительное следствие.

Nelly Aghababyan

PhD student of the Chair of Criminal Proceedings
and Criminalistics of the Law Department of YSU

Termination of criminal proceedings and criminal prosecution against minors

Minority is the feature of a person that defines his special status in the criminal procedure. It gives such person unique opportunities specifically expressed in the mechanisms of solving criminal cases. The similar mechanism is the termination of the criminal case or criminal prosecution.

Juvenile trials should vary from any other criminal proceedings by providing as favorable conditions as

possible, which should mostly foster the protection of rights and legitimate interests of minors. This means that there should be a special juvenile justice system that guarantees the juvenile justice. At the stage of the preliminary investigation the termination of criminal proceedings against minors fully complies with this requirement.

Keywords: minor, criminal proceedings, termination of criminal case, termination of criminal prosecution, preliminary investigation.

* * *

Հարություն Գևորգյան

ՀՀ ՊՆ ՌԱՎ ռազմատեխնիկական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի «Քաղաքացիական իրավունք» ամբիոնի հայցորդ

Սեփականատիրոջ ընտանիքի անդամների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի առաջացումը

Հոդվածում կատարվել է բնակելի տարածության օգտագործման, մասնավորապես սեփականատիրոջ ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքի հիմնախնդիրների վերլուծություն: Քննարկվող թեմայի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար ուսումնասիրվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, օրենսդրությունը, իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև՝ միջազգային փորձը:

Բնակելի տարածության օգտագործման իրավունքի հարցերը կանոնակարգող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը չի արտացոլում սեփականատիրոջ ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրավական բնույթը, ինչը լուրջ խնդիրներ է հարուցում իրավակիրառ պրակտիկայում: Ուստի, առկա խնդիրները լուծելու, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկվում է 225-րդ հոդվածում կատարել համապատասխան լրացումներ:

Բանալի բառեր. բնակելի տարածություն, բնակարան, սեփականատիրոջ ընտանիքի անդամ, օգտագործման իրավունք, իրավական բնույթ:

Арутюн Геворгян

главный специалист отдела военно-технического
Сотрудничества военно-промышленного управления МО РА,
Соискатель кафедры гражданского права юридического факультета ЕГУ

Возникновение права пользования жилым помещением членов семьи собственника

В статье проанализированы проблемы правового регулирования пользования жилым помещением, в частности права пользования жилым помещением членов семьи собственника. Для полного представления рассматриваемой темы, в статье были изучены решения Кассационного суда РА, законодательство и правоприменительная практика, а также международная практика. Статья 225 гражданского кодекса РА, регулирующая вопросы права пользования жилым помещением, не отражает правовую природу права пользования жилым помещением членов семьи собственника, что вызывает серьезные проблемы в правоприменительной практике. В качестве решения проблем, а так же в целях усовершенствования законодательства, предлагается внести соответствующие дополнения в статью 225 гражданского кодекса РА.

Ключевые слова: жилое помещение, жилище, член семьи собственника, право пользования, правовая природа.

Harutyun Gevorgyan

Senior specialist of military technical cooperation section
of defence industrial department of MoD of RA,
PhD student of the Civil law chair of law faculty of YSU

The Emergence of the Right to Use of Dwelling for the Family Members of the Owner

The article analyzes the problems of legal regulation on the use of dwelling, in particular the right to use of dwelling by members of the owner’s family. To have a complete perception of the topic, the article examines the decisions of the RA Court of Cassation, national legislation and law enforcement practice, as well as international practice.

Article 225 of the RA Civil Code, regulating use of dwelling issues, does not reflect the legal nature of the right to use of dwelling by the members of the owner’s family, thus causing serious problems in practice. As a solution to the problems and for the purposes of improving the legislation, it is proposed to make the appropriate amendments to the article 225 of the RA Civil Code.

Keywords: dwelling, apartment, family member of the owner, right to use, legal nature.

* * *

Վարդան Սախկալյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Իրավունքի էական հատկանիշները

Հոդվածում հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել իրավունքի՝ որպես սոցիալական նորմատիվ կարգավորիչի հիմնատարրի էական բնութագրիչները, բացահայտել է դրանց բովանդակային առանձնահատկությունները:

Բանալի բառեր. իրավունք, իրավունքի էություն, իրավունքի հատկանիշ, նորմատիվություն, որոշակիություն, իշխանական բնույթ:

Вардан Сахкалян

аспирант института философии,
социологии и права НАН РА

Существенные признаки права

В данной статье автор обстоятельно проанализировал существенные характеристики права, как основного элемента социально-нормативного регулятора, определил их содержательные особенности.

Ключевые слова. право, сущность права, признак права, нормативность, определенность, форма правления.

Vardan Sakhkalyan

PhD student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

The Essential Features of Law

The author analyzes in detail the essential characteristics of law, as a fundamental element of social and normative regulator, and defines their substantial features.

Keywords: law, the essence of the law, a feature of law, regulatory, certainty, governmental nature.

ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՉՎՈՂ ՂԱՀԱՆՁՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է կրեն գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերվի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջերի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝ ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարահարանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ միասին պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի այն տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4/201x297 մմ/ չափի և ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30մմ, աջից՝ 10մմ, վերևից՝ 20մմ, ներքևից՝ 25մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրել 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվի ինտերնետային հասցեն, և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և հնարավոր է չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: